

**ԴԱՐԴԱՆԵԼԻՑ ՄԻՆՉԵՎ
ՊԱՂԵՍՏԻՆ**

ՀՏԴ 994/99

ԳՄԴ 63.3

Ձ 822

**Նրանքարակվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտիութերդի որոշմամբ**

Հայուրը փայագրվել է Ուալֆ Յիրիկյանի աջակցությամբ

Թորոսյան Սարգիս

**Ձ 822 Դարդանելից մինչև Պաղեստին / Ս. Թորոսյան, թարգմ.
անգլերեն բնագրից՝ Լիլիթ Թութիսայանի. -Եր.: Հայոց
ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012. - 208 էջ:**

Սարգիս Թորոսյանի հուշագրությունը ներկայացնում է Առաջին աշխարհամարտի թոհուրուել անցած օսմանյան բանակի հայազգի սպայի ողիսականը: Դեպքերի ու դեմքերի անսպասելի անցումները, ցեղասպանության պակմությունը բոլորովին անսպասելի կողմից ներկայացնելը Սարգիս Թորոսյանի իրապատումը դարձնում է խիստ հետպաքրքիր ու գրավիչ հուշագրություն, որի ընթերցումն անշնչելի փառավորություններ է թողնում:

Նախադեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 994/99

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-822-19-8

Սարգիս Թորոսյան, 2012

ՀՅԹԻ, 2012

ՈՐՊԵՍ ԱՌԱՋԱԲԱՆ

Նայ ընթերցողին առաջին անգամ ներկայացվում է բացադրկ մի հուշագրություն, որի հետինակը օսմանյան բանակի հայազգի զինվորական է, ով անցել է Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած փարիների թոհուրոնի միջով, ապրել մարդկային ողբերգությանիրշափաքաժինը, հայրինվելանելաննիթվացողբազում փորձությունների ու փվայրանքների մեջ... Նրա անունը Սարգիս Թորոսյան է: Նա չի վերապրել Մեծ եղեռնը, սակայն քանի որ դարի մեծագույն ոճրագործություններից մեկի՝ օսմանյան կառավարության կողմից կազմակերպված հայոց ցեղասպանության զոհն է:

Սարգիս Թորոսյանի՝ իր բովանդակությամբ աննախադեալ ու եզակի այս հուշագրությունը պարզուն է ճակարպազրի բերումով և զինվորական պարսրի զգացումով Օսմանյան Թուրքիային բացառիկ ծառայություն նախուցած հայ սպայի կյանքի ու գործունեության մասին, որին մենք նեկանդությամբ են եերասությունն ու անձնագործությունը, դավաճանանությունն ու դավադրությունը, սերն ու կորսքի ցավը...

Անզիերենով լույս դիմած այս հուշագրության առաջին ընթերցումից սկսած փայակություններս շաբ մեծ էին: Զինվորականին հապուկ միջերի կուտ և ճշգրիտ նկարագրությունների հետ մեկ գեղեղ հետինակի շարադրանքում նկատելի է նաև անսպասելի անցումների ու զարգացումների հուզական մարդությունը, ինչի շնորհիվ գիրքը, բարիս բուն իմաստով, կարդացվում է մեկ շնչով:

Սարգիս Թորոսյանի կարևոր այս հուշագրությունը փայազրված է նաև թուրքերն և, մեր ունեցած փվալներով, այն արդեն առաջացրել է լուրջ հետքարքրություն թուրքական շրջանակներում՝ միևնույն ժամանակ դատարար փարաբենույթ մեկնաբանությունների ու բանավեճերի առարկա: Առանց վարանելու կարող ենք ասել՝ այս գիրքը մի յուրօրինակ փորձաքար էր նաև թուրքական այսպես կոչված լիբերալ շրջանների համար, որոնք, սպասվածին հակառակ, մեծ դժկամությամբ ընդունեցին այս հուշագրության փասդը՝ այն դիմելով որպես լուրջ մարդաբարակեր իրենի ու պարմության՝ գոյություն ունեցող վիճակին ու ընկալմանը:

Ինչո՞ւ...

Ակնհայր է, որ թուրքական պատմագրության և հիշողության համար սրբություն սրբոց դիմուն Դարդանելի կամ Չանաքլանի ճակարպամարդուն, որպես զոհվեցին հարյուրեազարավոր թուրք զինվորներ, այդ թվում նաև կայսրության այլազգի բնակչության ներկայացրուցիչներ, «եայկական հետքի» ի հայր գալը, այն է՝ ագուցված ցեղասպանության դաժան իրողության ու հետքանքների

հետ, Թուրքիայում ցնցում պետք է առաջացներ:

Տեղին է նաև նշել, որ Սարգիս Թորոսյանի այս հուշագրությունը կրկին շրջանառության մեջ դնելու և լայն լսարանին մաքուցելու մեր աշխադրանքներին զուգընթաց՝ բազմաթիվ նամակներ սփացանք Թուրքիայից: Թուրք նամակագիրները փորձում էին կասկածի փակ դնել Սարգիս Թորոսյան անձի գոյությունը՝ ի մասնավորի, և նրա պարմության հավասքիությունը՝ ընդհանրապես: Այսպես հարց է առաջանում. ինչո՞ւ Թուրքիայում այս հուշագրությունը նման տար հակագդեցություն առաջացրեց: Մեր խորին համոզմամբ՝ այսրեղ պարբռառներն առնվազն երկուսն են. նախ՝ Չանաքլալեի ճակա դրամարդում, որբեղ, ըստ թուրքական պարմագրության, հանուն հայրենիքի կովում ու զոհվում էին միայն թուրքեր, ուեղ չկար Սար զիս Թորոսյանի նման «հայ հերոսի» համար: Ապա՝ այդ նոյն հայ հերոսը, որ հիանալի կադարձում է իր առջև դրված ինտիր-ները և նոյնիսկ խորհուրդներ է փալիս թուրք ու գերմանացի բարձրասրբին զինվորականներին, գալիս է սրբերելու հենց Դարդանելում ծնավորված՝ Թուրքիայի Նանրապետության եիմասդիր Մուս-թաֆա Քեմալի «անզուգական» կերպարը: Մեր խորին համոզմամբ՝ հենց այսպես պետք է փնտիրն նման ցավուք արձագանքի ու հակագդեցության եղանական ակունքները:

Սակայն հերթական հուսախարությունը, որը վիճակված էր թուրք ազգայնականներին և կեղծ ազադական դիմակներով հանդես եկող պարմաքաններին, վրա հասավ այն ժամանակ, երբ ազգությամբ թուրք պարմաքան Թաներ Աքչամը Միհայջալ Նահանգներում՝ Ֆիլադելֆիա քաղաքում, հանդիպեց Սարգիս Թորոսյանի թոռնութուն, ով պարմաքանին ներկայացրեց գրքում հիշադրակված թուրքական շնորհակալագրերի, այդ թվում Էնվերի կողմից սկսորագրված փաստաթուղթի բնօրինակները: Այս բացահայտումը ևս մնկ եռարկած էր թուրքական ժխտողականության դիրքերին, ևս մնկ բացառիկ առիթ՝ օսմանյան բանակում իր ծառայությունների դիմաց եայ զինվորականի հարազաքաններին բռնագաղթի ու կոփորածի ենթարկող Օսմանյան Թուրքիայի ոճրագործությունների հայդնի ձեռագիրը բացահայտելու համար:

ՌԱՅԿ ԴԵՄՈՑՄՆ

Հայոց ժնդասպանության թանգարան-ինսդիվուտի դիմոքնն

ԴԱՐԴԱՌԵԼԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ

Իրական պատմություն Թուրքիայի հինգ
տազմաճակարտների, նրա դաշնակիցների և
հարեւմական սիրավեպի մասին

ԿԱՊԻՏԱՆ ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆ

Թուրքական բանակի հրետանային կապիդան և վերահսկիչ
սպա, Դամասկոսում Վեցիազարանոց արաբական հեծնազորի
ու դաշնակցային զորքի հրամանադրար, դասակի հրամանադրար,
հեծնազորի շփաք-կայանի սպա, Կիլիկիայում Ֆրանսիացիների
հրամանադրությամբ գործող Հայկական լեգենի սպա

**Նվիրում եմ նահարակված
ծնողներիս հիշարակին**

**Օսմանյան կառավարության վկայագիր՝ հանուն Ալլահի
Օսմանյան կայսերական բանակի
գլխավոր հրամանադրար**

**Հրետանային կապիտան Սարգիս բեյ Թորոսյան
Որդի Օհանի
Շնորավայրը՝ Կեսարիա, քաղաք Էլերեկ**

Կապիտան Սարգիս բեյ Թորոսյանը Դարդանելի պատերազմի ընթացքում Էրթողուլի բերդամասի ծանր հրետանային Վեցերորդ գումարտակի «Քափ Վիր» հրետանային մարտկոցի հրամանադրարն էր: 1915թ. փետրվարի 19-ին ու 25-ին թշնամու կողմից Դարդանելի նեղուցի վրա կարարված հարձակման ժամանակ կապիտան Թորոսյանը բացատկել խիզախությամբ դիմակայեց թշնամու ռազմանավերին՝ խորփակելով մեկը և անդառնալի վնասներ հասցնելով մյուսին: Նեփազայում նա սրբաճնեց Ռումելի-Համբուլի բերդամասի հրամանադրությունը: 1915թ. մարտի 18-ին Դարդանելի նեղուցի վրա թշնամու ռազմանավերի հրեշավոր հարձակման ժամանակ նա կրկին մարտինչեց թշնամու դեմ մեծ անձնվիրտյամբ և խորփակեց թշնամու մեկ այլ ռազմանավ: Դիշյալ անձնավորությունը վիրավորվել է պատերազմական գործողությունների ժամանակ՝ ցուցաբերելով մեծ խիզախություն և հաղթանակ՝ բերել Կայսերական բանակին: Ուստի նա արժանանում է Բանակի երախտագիրությանը և 1915 թ. դեկտեմբերի 16-ին սրբանում է կապիտանի կողմուն: Նաև պարզեւագրվել է Օսմանյան կայսերական բանակի Պարբերազմի շքանշանով:

**Ի հավատում՝ այս վկայագիրը դրվում է հիշյալ անձնավորությանը:
Գրված է 1915թ. մայիսի 18-ին:**

**Գլխավոր հրամանադրար
և
Պատերազմի նախարար՝ Էնվեր**

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՇԵՐ

Սարգիս Թորոսյանը ծնվել է 1891 թվականին Էվերենկ քաղաքում, որը գտնվում է Օսմանյան կայսրության հարավ-կենտրոնական նասում: Տարբական կրթությունը սփացել է հայկական ծխական դպրոցում, ինչը նրան մրավոր զգալի առավելություն էր դրվել չկրթված մահմեդական հարևանների շրջանում, որոնց իննատնիհնագ գոլկոսը որևէ կրթություն երբեւ չէր սփացել և իր ապրելակերպով վայրենիներից շատ չէր դարբերվում: Դեռ վաղ պատաննեկությունից Սարգիսը երազում էր զինվորական դառնալ՝ մի ասպարեզ, որը, թուրքական օրենքների համաձայն, խսդիվ արգելված էր քրիստոնյա հպատակներին: Սակայն... Աղրիանապոլսի պետքական ուսումնարանում սովորելու դարիներին նա բարեկամացավ Կոստանդնուպոլիսի բրիգադային գեներալի որդու՝ Մուհամետ անունով երիտասարդ արարի հետ: Այդ բարեկամության շնորհիվ Մուհամետի դառն նրան Վերաբերվում էին որպես հարազարդ որդու, և Մուհամետի հոր՝ այդ ազդեցիկ փաշայի շնորհիվ երկու պատանիները դարձան Ռազմական ուսումնարանի ուսանողներ: Փաշայի դուռը հաճախակի կարարած այցելությունների ժամանակ ծնվեց նրա սիրավեպը Մուհամետի քրոջ հետ:

1914 թվականին Ռազմական ուսումնարանը հրեդանային երկրորդ լեյտենանտի կոչումով ավարտելուց հետո Թորոսյանը երեք ամսով ուղարկվեց Գերմանիա և Թուրքիայի՝ պարտերազմի մեջ մրնելուց անմիջապես առաջ նշանակվեց Էրթողրուլի բերդամասի հրամանափար (Նելեսի հրվանդան): Նսկում էին Դարդանելի մուգքը: Այդ ժամանակից ի վեր և մինչ Ալլենբիի՝ Պաղեսդին ժամանելը նա ապրեց այնպիսի կյանքով, որ արժանացավ իր վերադասների գովասանքին,

պարզեներ սրացավ Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի կառավարություններից: Սակայն այդ դարիները նաև սարսափելի դառնություններ բերեցին նրան. կյանքից վաղաժամ հեռացան նրա նշանածոյ, պարանեկության մրգերիմ ընկեր Մուհարեմը, իսկ ծնողները դաժանորեն սպանվեցին թուրքերի կողմից:

Տեղեկանալով այն մասին, որ իր եղբայրները, ովքեր մեկնել էին Ամերիկա եենց այն ժամանակ, երբ նա ընդունվեց Ռազմական ուսումնարան, վերադարձել են հազարավոր հայ կամավորականների հետ՝ դաշնակիցների կողքին կրվելու, իր ծնողներին նենգաբար սպանած թուրքերի հանդեպ անհուն արելությամբ լցված՝ նա բաց ջրողեց թուրքական բանակը լրելու և Նորի Ֆաւուֆի հրամանափարությամբ կովող արարներին միանալու հնարավորությունը: Այնուհետև Պաղեստին՝ Նեծելազորի գյուղակոր շրաբ՝ որպես գումարփակի հրամանափար, ապա Ֆրանսիական հրամանափարությամբ գործող Հայկական լեգեոն... Բեյրութից մինչև Կիլիկիա ռազմական ծառայություններ մարդություն նամար նա պարզենարկվեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից:

Դինգ ռազմաճակարբներում պարբերազմական գործողություններին մասնակցելը, ինչը զուգակցվում էր ռազմական վարձով ծեռք բերված խորքային գիրենիքներով, կապիկան Թորոսյանին հնարավորություն ընձեռնց ծավալուն նյութ կուտակելուանձնականօրագրիկամար: Կարծումենք՝ կիամաձայնք, որ նա այդ նյութը լավ է մարդուցել:

Կապիկան Թորոսյանը հայվնի է Ֆիլադելֆիայում և նրա շրջակայքում, որպես նա լեզեռներների բազում հավաքների ժամանակ հանդիսավոր է եկել դասախոսություններով:

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՄԴԱՄԱՐՏԻ ՕՐԵՐԻՆ

Մի ամբողջ դրանամյակ կամ ավելին է անցել Արևելքում անցկացրած իմ օրերից: Մի ամբողջ դրանամյակ կամ ավելին է անցել իսաղաղության հասդարման և Ամերիկայում գոյադրելման համար մղած պայքարիս օրերից: Ես մդորենք շատ ժամանակ ունեի և եկա այն եզրակացության, որ երջանկությունը հենց ապրելն է, ինենք ուրախության հրճվանքն է, փշրության ցավն է, սիրելն ու ափելն է: Կյանքով լի ապրել նշանակում է հասկանալ սոցիալական ու դրդեսական ուժերի եռթյունը, հասկանալ մարդկանց, իմբերի և ազգերի գործողությունների շարժառիթեները:

Նոգեբանական առումով, կարծում եմ, իմ մնջ դեռ շատ բան է մնացել զինվորականից. իմ մդածելակերպը ծնավորվել էր դեռևս Ռազմական ուսումնարանում: Ես զրականության մարդ չեմ: Այն, ինչ կպարմեմ ծեզ, կարող է արկած թվալ: Իրականում դա իմ կյանքի մի հարվածի պարմությունն է: Ես կշարադրեմ այն այնպես, ինչպես կարող եմ, ուսպի ներողամիտ եղեք, եթե փարզեմ այն ամենով, ինչ կապված է եղել հաղթական մարդերի հետ: Ես դեսել եմ զիշերային անապարի երկնքում առկայծող պայծառ ու սառը ասդրերը, դեսել եմ լուսնի ցոլքերը Բոսֆորի ջրերի վրա, հիշում եմ թուրքական հին այգիները, որոնց մթնշաղը պարուրում էր աներևակայելի գեղեցկությամբ, և արևով օրերը, երբ փրված ամպերը արագաշարժ սուրհանդակների նման պանում էին երկնքում: Հիշում եմ արևամուրը, որ մանուշակագույն էր, վարդագույն, ուսկեցույն ու ծիրանի: Ես լավ եմ ճանաչում Արևելքը՝ կործանված առաջին սեր, իսութի գեղեցիկ դարձվածք և ձանձրալի դափարկախոսություն... Սակայն շատ

ավելի լավ ճանաչում եմ պատերազմը, խարդավանքն ու անծանոթ սարերը, մինչ նրանք կծածկվեն վերահաս փոթորկի չարագուշակ սևով:

* * *

Կարո՞ղ եմ արյօք իինգ չափազանց կարճ գլուխներում ջեղվել պատմությունից: Խոսդանում եմ, այլևս դա չանել: Այդպիսով միդքս արագ կազարեմ նախորդող դարիներից և արագ կանցնեմ բուն պատմությանս:

Աշխարհը փոխվում է: Սակայն այն ժամանակներում, որոնց մասին գրում եմ, աշխարհը կառավարում էին մարդկանց ճախրող սպվերները: Այդ մարդիկ խոշոր էին կամ մանրակազմ, բարձրահասակ էին կամ զաճաճ. դրանք մարդուկներ էին, որոնց ամենաակնառու հավկանիշներն էին նրանց անփարբերությունը մարդկային կյանքի հանդեպ և հանուն սեփական հավակնությունների մյուսներին գոհաբերելու պատրաստակամությունը: Նրանք անկում ապրող կարգերի անհետացող ազդարարներն էին: Հավանաբար նրանց փեղը պատմության մեջ մահաբերի ու գրութեսկի շարքում է: Նրանք խորհրդանիշներ էին, եթե կուգեք՝ ճակապագրի խորհրդանիշներ, որոնց խորթ էին թե՛ ուրախությունը և թե՛ ապաշխարանքը, հանցավոր անփարբեր էին միլիոնավոր մարդկանց հերոսության և ինքնազնության հանդեպ. նրանց համարում էին իրենց խամաճիկները: Նրանք նույնքան անդեմ էին, որքան ճակապագիրը, սակայն հիմա արդեն ես երջանիկ եմ այն համոզմամբ, որ նրանք նույնքան անխուսափելի չեն: Նրանք նման էին դաժան ու հնարամիւր ասդվածների, որոնք անփարբեր ու անխնա կործանում էին մարդկային հսկայական զանգվածներ, միլիոնավոր ու միլիոնավոր մարդկանց կյանքեր, ովքեր դառապում ու դրնում էին, և ի վերջո հենց նրանք էին բոլոր մեծ սիրանքներ կադարձները:

Այս ամենը հեգնանք է, քանզի այն սպվերները, որոնց

մասին ասացի, աշխարհի փերերն էին: Իսկ հեգմանք ասելիս նկատի ունեմ այն, որ այդ սրբերները՝ աշխարհի այդ փերերը, որպես անհավիներ նույնքան անկարևոր էին իրենց իսկ ծնած հասարակության համար, որքան նրանց կողմից ոչնչացված միլիոնավորների կյանքը՝ իրենց համար: Նրանք սուկ գործիքներ էին օգարերկրյա փողադեր իմաւերիալիստների ծեռքին, ովքեր այն օրերին կառավարում էին ողջ աշխարհը: Դրանք այն անձինք էին, որոնց օգարերկրյա իմաւերիալիստական մերենայությունների զոհը դարձան իմ ծնողները, կուրորվեցին հարյուրհազարավոր, միլիոնավոր իմ հայրենակիցները: Նրանք թշվառականներին մարդնողներն էին ու դարպապարդրված էին անհետանալու այնպես, ինչպես դարպապարդրված էր իմ ժողովուրդը:

* * *

Առաջին համաշխարհային պարերազմի դարիներին ես կապիրան էի, թուրքական քանակի հրեդանային գումարդրակի հրամանադրար, իսկ այնուհետև՝ Արաբական ապարամբության ընթացքում, առաջնորդել եմ վեց հազար արար հեծյալների, այն ժամանակ, երբ Արաբիայի գնդապետ Լոուրենսը բրիդանական ոսկու պարկեր էր քարշ դալիս խոր թիկունքում: Մենք նրան արաբերեն անվանում էինք *Hanaja-el-Masra*՝ գանձապահ: Իրականում նա և՛ գանձապահ էր, և՛ վերահսկի ու այնպեղ էր ուղարկվել՝ հետևելու համար, որ մեր բրիդանացի իմաւերիալիստ դերերն իրենց վճարածի դիմաց լիարժեք աշխարհանք սրբանան:

Կար ժամանակ, երբ ես անկեղծորեն հավաքում էի, թե իմ ծնողներին ու իմ ժողովրդին սպանողները թուրքերն էին, և որ նրանց դաժանությունը դարձավ իմ քրոջ մահվան պարճառը: Սակայն իհմա զիտեմ, որ իրական մարդասպանները Անգլիան ու Ֆրանսիան էին, թեև դրանց փախարեն կարող էր լինել օգարերկրյա իմաւերիալիստական ցանկացած երկիր:

Թուրքերը սոսկ գործիք էին օդարերկրյա իմպերիալիստների ձեռքին:

Ես ասում եմ, որ դրանք Անգլիան ու Ֆրանսիան էին, քանի որ Գալիպոլիի թերակղզու Էրթողրուլի թերդամասում թուրքական հրեփանային մարտկոցի հրամանափար էի և դժուել եմ մեր պաշտպանական դիրքերը՝ ամրակետ ամրակետի հեվեսից, որոնց ծվեն-ծվեն արեցին անգլիական ու ֆրանսիական ռազմանավերը: Եվ դժուա, թե ինչպես հաղթողները թիկունքով շրջվեցին դեպի այդ հաղթանակը, հեռացան ու այլևս չվերադարձան: Համաշխարհային պատերազմը կարող էր ավարտվել՝ դեռ չսկսված, եթե անգլիացիները ցանկանային հաղթել Դարդանելում: Բայց անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները հաղթանակի չէին ձգվում, չէին ցանկանում, որ ոռու իմպերիալիստները փիրանան Դարդանելին, չէին ուզում, որ Ռուսասփանը խանգարի Անգլիային շահագործելու Հնդկասփանի գաղութային կայսրությունը կամ սպառնա Ֆրանսիայի ազդեցությանը Միջերկրականում: Այդ պարբառով սպանվեցին իմ ծնողները, և անհաշիվ մարդիկ զոհվեցին՝ անհնասդր հերոսական սխրանքներ կապարելով բազում ռազմաճակարներում:

* * *

Թեև ծառայել եմ թուրքական բանակում, սակայն ծնունդով հայ եմ և այն սակավաթիվ քրիստոնյաներից մեկը, որ դարձավ օսմանյան բանակի սպա:


Ահա այսպես, մի կարճ պարբերության մեջ, հուսով եմ, ինարավորինս հսկակ ներկայացրի ազգային ու աշխարհագրական պարկանելություն: Դիւ դունս մանրամասն նկարագրելը շաբ դժվար է: Դա մի աշխարհ է, որը բացարձակապես օդար է Ամերիկային:

Դայերս՝ որպես ճնշված ազգային փոքրամասնություն, անշնորհք կառավարվող, շահագործվող, պգետ մուեզզին-

ների՝ թեկադրանքով ապրող մարդկանց երկրում միշտ եղել ենք գաղփնապահության ու կասկածի մթնոլորդում։ Մեզ կառավարում էին լրդեսության ու արյունահեղության, անասելի վայրագությունների, ջարոնքի ու դաժանությունների միջոցով։ Կարծ ասած՝ մեզ կառավարում էին այնպես, ինչպես բոլոր ազգային փոքրամասնություններին ճակարտագրով նախանշված է կառավարված լինել աշխարհի բոլոր անկյուններում։ Ինքնավարության մեր մոլեգին դենչանքը մեզ խաղալիք դարձեց նախ իմպերիալիստրական Ռուսաստանի, ապա իմպերիալիստրական Անգլիայի, իսկ Վերջում իմպերիալիստրական Ֆրանսիայի ծեռքին։ Սակայն պետությունների անվանումները կարևոր չեն։ Օպարերկրյա իմպերիալիզմի նպագրակն ու գործեկակերպը գրեթե անփոփախ են. խորքում այն մնում է անազնիվ և կարարելապես նողկալի։ Օպարերկրյա իմպերիալիստրները, որոնք բորբոքում էին մեր ազգային դենչերը ու մնում էին ապսրամբության, վերևի աղացաքարն էին, իսկ ներքսինը՝ շահագործված թուրք ամբոխը, որին վայրագությունների էին դրդում իր առաջնորդները՝ ամբոխահաճները, ովքեր փորձում էին մոռանալ իրենց սեփական խղճուկ վիճակը՝ հայերին հալածելով ու կրոնական մոլեսանդրություն բորբոքելով։ Մեզ դրդում էին անիրականանալի, երևակայական ազգային նկրվումների իրականացման այնքան ժամանակ, մինչև թուրքերն ի վերջո, մեր ապսրամբության մշտական վրանգից կարադած, որոշեցին մերկընդմիշտ լուծել Հայկական հարցը Հանաշխարհային պատերազմի օրերին կազմակերպված զանգվածային ջարոնքի միջոցով։

Երբ իիշում եմ մանկությունս, կարծես թե ամեն բան՝ այն մթնոլորդը, որում ապրում էինք, դիմերը, որդեռն բնակվում էինք ու աղոթում, դպրոցները, ուր հաճախում էինք, ներշնչված եր ռազմական ոգով։ Թվում եր, թե ապրում ենք պաշարված

* Մունզզին - մինարեթից հավաքացյալներին աղոթքի կոչող մահմնդական կրոնավոր



Սարգիս Թորոսյանի մարդական ուղին

քաղաքում, գինված ճամբարում, միայն թե զենք չկար, քանզի Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներին արգելված էր որևէ զենք ունենալ, նույնիսկ թուր: Մթնոլորդը, որ հագեցած էր անվերջանալի ասեկրսեներով, կարադի զսպածությամբ, մայլ համբերությամբ և հավերժական վախով, միշտ լարված էր: Էվերեկում մենք՝ հայերս, անվերջ սպասում էինք ինչ-որ մի նշանի՝ խորերդավոր ու գուշակողական, որը կմեղմացներ կարադի իրադարձությունների համայնապատկերը. դա կրոնական զգացում էր: Ես հաճախում էի մի դպրոց, որը գրինվում էր հասք քարե պարերի հեփեռում՝ հայկական եկեղեցու փարածքում: Կարծես ամրոց էի մինում. պարերը վեց մետր բարձրություն ունեին, իսկ դրանց ներսում եկեղեցին էր, ծխական դպրոցները և հոգևորականների տները:

Մեր տները կառուցված էին այդ նույն միգրումով՝ հնարավորինս պաշտպանել անգեն և հաճախ հալածանքի ենթարկվող մարդկանց: Դրանք ունեին քարե հասք պարեր, փասնվեցից քսան սենյակ, այնպես որ ողջ ընդանիքը (փարերն ու պապերը, մորաքրույրներն ու հօրենքայրները) կարողանար ապել հնարավորինս համախմբված: Մեր միակ պաշտպանությունը մեր միասնականությունն էր: Ամեն գուն ուներ մուգքի միայն մեկ դուռ, որը չափազանց մեծ էր՝ կառուցված ամուր փայտից: Տների փակ սպորգելինյա անցումների ու թաքսուցների մի ամբողջ ցանց կար, ուր արագ իջեցնում էին կանանց ու երեխաններին. նրանք մնում էին այնպես առանց փարրական հարմարությունների այնքան ժամանակ, մինչև անցնում էր Օսմանյան կառավարության նախաձեռնած հերթական կոփորածը: Նայ փղամարդիկ կովում էին քարերով ու մահակներով. դրանք էին նրանց միակ զենքը:

Դիշում եմ նաև մեկ այլ հավկանիշ. եթե քաղաքը կամ գյուղը հայկական էր, ուրեմն վրաները կանգնած էին կողը կողքի՝ փանիքներն իրար կպած: Դա էլ էր համախմբվածություն: Դա մեր միակ պաշտպանությունն էր: Նոյնիսկ ազարա-

կարերերն էին ապրում զյուղում և ամեն առավոր գնում էին իրենց ազարակները, որոնք զյուղի ծայրամասում էին:

Ես խաղում էի մռայլ պարերի ու վախի արվերների ներքո, իսկ երբ դարձա պարանի, իմ համերկրացիներից երեսուն-հինգ հազարը թուրքական Կիլիկիա գավառում ենթարկվեցին կորորածի: Դա գտնի ունեցավ 1908 թվականին՝ երիտրուրքերի ապարամբությունից անմիջապես հետո, այն ժամանակ, երբ թուրքերն ու հայերը միասին ուրախ էին, որ սուլթան Աբդուլ Համիդը գահընկեց եղավ: Այդ ջարդերի հետքնանքը եղավ այն, որը սուլթանը վերջնականորեն հեռացվեց իշխանությունից: Նրան բանդ նեփեցին, և մենք բոլորս հավաքացած էինք, որ վերջապես խաղաղություն կտիրի, ու կազարվենք հետպանդումներից: Իմ ավագ եղբայրները նավով մեկնեցին Ամերիկա, որն այն ժամանակ առավության երկիր էր համարվում: Մեր ընդունիքը համեսդր եկամուտ ուներ, և Ամերիկայից նրանց ուղարկած դրաբները մեծ օգնություն էին:

Թուրքական սպառնալիքը և Հայկական հարցն այլևս պետք է վերանային:

ԳԼՈՒԽ 2

ՌԱՐԵՍԱԿԱՆ ՌԱԿԵ ՕՐԵՐԸ

Կյանքը շար ավելի իմաստալից է, քան այն օրերը, որ մնում են հիշողության մեջ: Մեր երազանքներով ազնվացած՝ ոչ կարևոր միջադեպերը ժամանակի ընթացքում սրանում են կարևորագույն իրադարձությունների արժեք, իսկ մեր անցյալ արարքներն ինչ-որ կերպ բացարքվում ու մեկնաբանվում են այնպես, որ համապատասխանեն մեր այսօրվա համոզմունքներին: Ես փորձեցի խուսափել այդ վիանգից: Թում է, թե մենք՝ Էվերեւի փոքրաթիվ հայերս, պարերազմ էինք խաղում չափից ավելի խանդակառ և չափից ավելի մռայլ, քանի որ Թուրքիայում հայի համար ոչ թե զորակոչիկ, այլ իրական զինվոր դառնալը պարզապես անհնարին էր: Սակայն, ընդհանուր առմամբ, երկյուղի նվազող սրբերներից բացի, որոնք միշտ մեզ էին, իմ վաղ պարանեկությունը իրադարձություններով հարուստ չէր:

Դինք հարյուր կամ ավելի մղան դրնից հեռու, ծնողներիս մեծագույն զոհաբերության շնորհիվ. Աղրիանապոլսի թուրքական պետրական ուսումնարանի ուսանող էի, երբ կյանքն ինձ ներկայացավ իր ամենալուրջ կողմանվ, ու սկսվեց իմ փարօրինակ ուղին:

Շար փարիներ առաջ, երբ վիշտը խոցում էր սիրտս, եթե ինձ խնդրեիք ոդջ կյանքս ներկայացնել մեկ նախադասությամբ, ես կպարասխանեի՝ ինձ համար կյանքը սկսվեց այն սերվ բարեկամությամբ, որ ծնվեց Աղրիանապոլսում ու ավարտվեց Արաբիայում՝ եին պարտեզի ծիրենու մոտ:

Մուհարեմն արաք էր, իսկ նրա հայրը՝ Կոստանդնուպոլսի բրիգադային գեներալն էր:

Ճակապագի՞ր: Նարավորություն...

ճակարտագիրը ճանապարհի վերջն է, իսկ պարտականությունը՝ այն քամին, որ քշում է մարդկանց այնպեղ: Երկուսն էլ ծածկված են անթափանց քողով:

Անվանեք ինձ դանդաղամիտ: Ասեք, որ իմ մեջ ապրում է Արևելքի միստիցիզմը: Սակայն եթե ես չխանդիպեի Մուհարեմին, ո՞վ գիտի...

Ուսումնարանական առաջին օրերին մենք հանդիպեցինք որպես սովորական համակուրսեցիներ: Մեր ծանոթության սկիզբը չնշանավորվեց որևէ արդակարգ բանով, և այդուհանդերձ մենք դարձանք այնքան միգերիմ ընկերներ, որ ասես եղբայրներ լինենք: Մեր առաջին ամառային արձակուրդի նախօրեին մենք արդեն անբաժան էինք, և Մուհարեմի գրնից սրացված նամակների շնորհիկ գիրեի նրա ընդունիքը նույնքան լավ, որքան իմ սեփականը: Ակնհայտ էր, Մուհարեմի նամակները լի էին մեր բարեկամության նկարագրությանք, քանի որ ես իրավեր սրացա արձակուրդս անցկացնելու բոսֆորի ափին գրնվող Փաշայի դրյակում:

Երանի՛ կարողանայի նկարագրել այն հիասքանչ օրերի խանդավառությունը, որն ապրում էի այն ժամանակ և դեռ հիմա էլ զգում եմ՝ ապշեցնող շքեղություն, անսովոր պերճություն...

Դյոյակում ես շրջապարփած էի Արևելքի հանդարս մեծաշքությամբ ու հիանալի ճաշակով. թանկարժեք խճանկարներով, շքեղ գործվածքներով, պարսկական անգին, հնառն գորգերով, որոնց առջև նսպում էի հիացած և ուսումնասիրում գորգերի զարմանազան նախշերը, բարձր պարտահանների՝ արծաթաթել դիպակից կարված վարագույրները, բազմացների ծեռագործ կաշվե ծածկոցները:

Դա նման էր մի կախարդական եեքիաթի: Ամեն բան այնքա՛ն հիասքանչ ու իրական էր և միաժամանակ մի քիչ աներևակայելի: Ու ինձ թվում է, որ Մուհարեմի բարի մայրը, նրա քաղցրիկ ու նրբազգաց քոյրերն ինձ հասկանում էին: Փաշայի գունը դարձավ իմ երջանկության օրրանը, նաև այն

դատապանքներով լի ճամփորդության սկզբնակեդր, որն այնքան դիմուր ավարդվեց Վրաբիայում՝ անմռանալի այն պարբերում:

Երբևիցե դեսե՛ եք կամեայի՝ նրբաքանդակի պես մի հենք, նայե՛ եք ջինջ, սև ու պայծառ աչքերի մեջ, դեսե՛ եք, թե ինչպես են դրանց ցոլքերն ու սրվերները շնչում բառեր, որ շրջունքները չեն արդասանի: Չեմիլեի աչքերը հենց այդպիսին էին: Նա Մուհարեմի կրտսեր քույրն էր, սակայն, կարծեմ, ավելի պճնասեր էր, քան նրա մեծ քույրը՝ Ֆերհիդեն:

Արդյոք լուսինը երբեմ կշողա՞ այնքան հիասքանչ, որքան շողում էր Բոսֆորի վրա և լուսամուտի ճաղերի միջով այն օրերին, երբ օդը հագեցած էր պարբերով բույրերով:

Ուազմական ուսումնարանում մեր անցկացրած փարիները սլացան որպես արագ թերթվող էջեր՝ անհոգ, երջանիկ. ուրախ փարիներ, որոնք Մուհարեմին փանում էին դեպի Ուազմական ակադեմիա, իսկ ինձ՝ հայդնի չեւ, թե ուր: Գուցե գրագի՞ր պետական հիմնարկում: Ամենից շատ ես ցանկանում էի դառնալ այն, ինչն անհնար էր հայ քրիստոնյայի համար՝ թուրքական բանակի սպա:

Երբեք չեմ մռանա այն օրը, երբ ուսումնարանն ավարդելուց հետո դուն վերադարձանք: Այդ օրը մեզ հրավիրեցին Փաշայի հետ ճաշի: Նա նսփած էր միայնակ ընդունելությունների հսկա սրահում՝ արծաթե լուսամփուփի բյուրավոր մոմերի լույսի ներքո: Մութ, խորհրդավոր մի կերպարանք: Բազմոցի կողքին գտնվող հյուրասեղանին դրված էին մնդաքան քողով ծածկված ոսկե ու արծաթե ամաններ՝ լցված մրգերով ու աղանդերով:

Մուհարեմը ցանկանում էր, որ մենք միասին հաճախենք Ուազմական ակադեմիա, ինչի մասին հայդնեց հորը: Ես սարսափեցի Մուհարեմի իննթությունից, սակայն երբ Փաշան շեշտեց դրա վերաբերյալ թուրքական օրենքի խսդությունը, այնքան ընկճված ու անմիջաբար էի, որ գույնս գցեցի ու գրեթե ուշաբափ եղա, չեմ չափազանցում:

Փաշան կարծես նույնքան դիմուր էր, որքան և ես: Լուս նսփած էր երկար ժամանակ. նրա սկզբուն մուգ աչքերը մղախտի նայում էին հեռուն: Որոշ ժամանակ անց նա ժպիաց ու ասաց, որ պեսք չէ հուսահարվել:

Նաջորդ մի քանի օրվա ընթացքում ես անհանգիստ շրջում էի դյոյակում. միդրս անդադրում ելք էր փնտրում:

Անցավ մեկ շաբաթ: Մուհարեմը և ես իմացանք, որ Փաշան, ի պատիվ վարչապետի, մեծ ընդունելություն է կազմակերպում, որին հրավիրված էին ռազմական ոլորդի ընդույալ բարձրասդիճան պաշտոնյաներ, ինչպես նաև պետքական այլ կարևոր անձինք. նրանք, Փաշայի կարծիքով, կարող էին օգտակար լինել իր ծրագրերի իրականացման գործում: Ճաշկերույթին մննք հրավիրված չէինք, սակայն հետքո Մուհարեմին ու ինձ ներս կանչեցին սրահ, որտեղ Փաշան ճարդարախոսությամբ հայցեց հրավիրյաների օգնությունը իր սիրելի երկրորդ որդուն (այդպես էր ինձ անվանում) Մուհարեմի հետ միասին ռազմական ուսման դաշտում՝ ի վաստ իր ընդունիքի: Մուհարեմին և ինձ հերթով ներկայացրին բոլոր պաշտոնյաներին: Երբ դուրս եկա սենյակից, բոլոր այդ շքեղ համազգեստներից, թռիչ ու բեղավոր դեմքերից ինձ ուղղված ջերմ ժպիքներից և մեր պարփին բարձրացված գինու բաժակներից գլուխ պարփում էր:

Երկու շաբաթ, գուցե ավելին, ես թափառում էի դյոյակի այգում՝ երազելով ապագայի մասին այնքան ժամանակ, մինչև պարփուհանի ճաղերի հետքնից կերևար Ձեմիլեն, կամ կիանդիխպեի նրան այգու արահենիքներում և այդ ժամանակ սկսում էի մրածել միայն նրա հետ գեթ մի բար փախանակելու մասին:

Երևի չափազանց հնառն թվա, սակայն թուրք ընդունիքի աղջկա համար, ում ոչ ոք չի ուղեկցում, դուրս կամ գրու-ցելն անհանդուրժելի խայբառակություն էր: Սակայն նույնիսկ Օսմանյան Թուրքիայում, ներքինի պահապաններին հակառակ, երիբասարդների սերն իր ճամփան գրնում էր:

Բայց Զեմիլեն ու նս այդքան հաջողակ չէինք. մենք պարկանում էինք փարբեր հավաքըների, իսկ ես ինձ պարփակորված էի զգում Փաշայի հանդեպ:

Եվ այդուհանդերձ ես սիրահարվեցի թուրքական քոյի փակից փայլող այդ աչքերին, որոնք պայծառ էին, ինչպես պարզկա զիշերվա ասդրերը: Դա մի սեր էր, որը Ամերիկայում երիտասարդները եազիկ թե հասկանան՝ անձնվեր, վառվուն, միշտ հավաքարին և ոչ պակաս բուռն, թեև շուրթերս նրա ձեռքին անգամ չէին դիպել: Խոսքերը մեր աչքերում էին, ու սիրո երկար բացարդությունն արգահայկվում էր մի ժեստով կամ ձեռքի շարժումով:

Մի օր Փաշան վերադարձավ, գրկեց Մուհարեմին ու ինձ, և նս հասկացա, որ Վերջապես իղձերս իրականացել են: Աշնանը մեզ գրանցեցին որպես Հրեփանային ուսումնարանի ունկնդիրներ: Դրան հաջորդած օրերն անցնում էին փենդային խրախճանքի մեջ: Ես դեռ եիշում եմ այդ օրերի ուրախությունը, թեև պարզորոշ ոչինչ չեմ նրաբերում: Միայն եիշում եմ, որ այդ մասին գրեցի ծնողներիս, և նրանք այդ առիթով Էվերեկում մեծ եյուրասիրություն էին կազմակերպել:

Հրեփանային ուսումնարանում ոչ ոք այդքան ջանասիրաբար չէր սովորում, որքան ես: Ոչ ոք այդքան համառորեն չէր վարժվում սուսերամարդի, մարմնամարզության ու ձիավարության մեջ: Ես գիրակցում էի, որ պարփակոր եմ դասարանում լինել առաջինը և դարձա:

Ուրբաթը թուրքերի շաբաթն է, և այդ օրը մենք՝ ուսանողներս, հազնում էինք մեր լավագույն համազգեստը և այցելում մեր ծնողներին ու բարեկամներին: Փաշան միշտ հապուկ կառք էր ուղարկում Մուհարեմի ու ինձ համար: Զգիրեմ՝ ես էի ավելի հպարտ Փաշայով, թե նա՝ ինձնով: Ի՞նչ հիասքանչ էր աշխարհը: Ի՞նչ փայլուն էր ապագան... Ծագմական կրթություն, հիանալի համազգեստ, կառք ուրբաթ օրերին և երջանիկ պահեր, երբ և՛ երախփագիրությունը, և՛ հարգանքը Փաշայի հանդեպ, և՛ ամեն բան կորքում էին լուսնի շողբի կամ կիպարիսի

մութ սպվերի ներքո, ու ես վերջապես մի բառ էի փոխանակում Ձեմիլեի հետ, ում պաշփում էի: Ես ժպկում էի, երբ նա դիմուր հայացքով նայում էր ինձ, քանզի գիրեի, որ Ձեմիլեն մրածում է, թե արդյոք ի՞նչ է պաքրասպում կյանքը մեզ համար: Ես այնքան վսրահ էի... Երբեմն նա հեռանում էր ընդամենը մեկ նախադասություն շշնչալուց հետո՝ աշքերն արցունքով լցված: Ես դիմուր էի, երբ նա էր դիմուր, սակայն շարունակում էի ժպիալ, քանի որ երջանիկ մարդ էի ծնվել, և ինձ համար չկային անհաղթահարելի խոչընդուներ, լիներ դա կրոն, թե սովորույթ: Փաշան արքակարգ ու բարի անձնավորություն էր, Մուհարեմն ինձ համար կարծես եղբայր լիներ: Ես ծնվել էի երջանիկ ասպրի դրակ: Ես շարունակում էի հավաքալ դրան նոյնիսկ ուսումն ավարդելուց հետո: Մուհարեմն ու ես ավարդեցինք Հրեփանային ուսումնարանը բարձրագույն պարզեներով, և Փաշան ևս մեկ անգամ մեծ ընդունելություն կազմակերպեց ու հրճվեց մեզանուք:

Մենք սպացանք երեփանային երկրորդ լեյփենանսի կոչում, և հերավարդական ռազմական մարդավարության կարճափև դասընթացից հետո մեզ ուղարկեցին Գերմանիա՝ եռամսյա լարված վարժանքի: Այն օրերին, երբ մենք վարպետանում էինք մեր մասնագիտության մեջ, սիրո կամ ապագայի, կամ որևէ այլ բանի մասին մրածելու ժամանակ չկար:

Թուրքիա վերադառնալուց անմիջապես հետո սպացանք մեր առաջադրանքները. Մուհարեմը նշանակվեց համիարգ այն դիվիզիայում, որտեղ ես նշանակվել էի հրեփանային գնդի հրահանգիչ:

Այդ ամենը իւննթացուցիչ էր, այնքան հիասքանչ, գունեղ ու նոր, որ մենք ուշադրության չարժանացրինք այն շրապողականությունը, որով կարարվեցին մեր նշանակումները: Ձեմիլեին ուղղված նամակ, որը, անշուշտ, առաջինը կկարդանքար. դա էր սիրո արքահայպության ինձ հասանելի միակ ծերը: Ես գիրեի, որ նա կկրահի այն բառերը, որոնք չեն հանդգնել գրել, ինչպես նա գիրեր՝ ես կիասկանամ, որ

այն փոքր պաշտոնական երկրողերը, որ գրված էին նրա մոր աչքերի համար, պարունակում են հազարավոր չափած սիրո միջեր: Սակայն իրական խոշընդուպներ գոյություն չունեին, քանի որ ես երջանիկ մարդ էի, իսկ Փաշան՝ բարի ու արդասովոր խորաթափանց մարդ:

Հօգուս մեջ յուրարիեսակ կարուր էր աճում. ցանկանում էի վերադառնալ Էվերեն՝ իմ սքանչելի համազգեստը հազիս, թուրս կապած, փայլեցրած, արևի դրակ պակ պլայլացող ճիքակոշիկներով: Որքան հպարտ կլինեն ծնողներս: Ես ուզում էի, որ նրանք հպարփանան ինձնով: Ես նրանց բախփավոր որդին էի՝ իման արդեն թուրքական բանակի սպա, քանզի նրանք կափարել էին ինձ Աղրիանապոլիս ուղարկելու զոհաբերությունը: Վյոհ ուղևորության մասին միտածելիս ես շաբ էի հուզվում. այն պեսքը է դառնար յուրահափուկ հաղթական վերադարձ:

Ես դիմեցի արձակուրդ սրբանալու ինդրանքով, սակայն, ի զարման ինձ, գեղենկացրին, որ պափերազմը մուր է, և որ ինձ որպես երամանափար ուղարկում են Էրբուրդուի քերդամաս (Նելլեսի հրվանդան), որը եսկում էր Դարդանելի մուտքը նեղուցի Եվրոպական կողմից: Մոհարենք նշանակվեց Դարդանելի ամրակեցիների երամանափար, գեներալ Զենադ փաշայի քարփուղար: Մենք առնվազն միասին էինք լինելու:

Փաշան մեծապես միահոգված էր, որ մեզ նշանակել են նման վրանգավոր գովում: Իսկ մենք ոգևորված ծիծաղում էինք, իսկապես ծիծաղում՝ մոռանալով կարգապահության, քաղաքավարության, ավանդականուխսիքորդիական պատրկառանքի մասին, ինչը դիրում էր մահմենդական ընդանիքներում: Հավանաբար մեր ոգևորության մեջ ինչ-որ վարակիչ բան կար, քանի որ Փաշան էլ դիմուր ժպիում էր:

Պարերազմ, պափերազմի մասին լուրեր... Կոսդրանդնու-պուսի օդը լցված էր գենդային ասեկոսեներով: Ամենուրեք ելույթ էին ունենում նվազախմբեր, զինվորներն անցնում էին համաքայլով, շողջողում էին սվինները: Գերմանացի փայլուն սպաներ... Անսպասելի մեծ թվով գերմանացի սպաներ կար-

ծես ներգաղթել էին Թուրքիա: «Եօնկազոր, ծննդացող կոչկախթաններ, ծածանվող դրոշներ, ամենուրեք ծիծաղ, ուրախություն, և բոլորն անվարանգ են զգում իրենց, քանի որ Դարդաննի ջրերը հսկում են գերմանական ռազմանավերը՝ «Գյոբնն» ու «Բրեսլաուն»:

Դա պարզապես կափակ է: Սարաևոն ու դրան հաջորդած համաշխարհային իրադարձությունները՝ ամեն բան կափակ է: Թքած ամեն ինչի վրա: Մենք զինվոր էինք, որ ուրախ կլինեինք ապացուցել մեր եռանդը, սպաներ, ովքեր երազում էին վտածարկել մարդական ռազմանավարության վենսությունը: Մենք երիբասարդ էինք, և պարերազմը մի մեծ արկած էր թվում մեզ, որը խոսդանում էր պարիվ ու շքանշաններ: Մենք չէինք մրգածում պարերազմի սարսափների, արյունով, նողկալի, գարշելի իրազության մասին:

Ես զարմանում եմ, թե ինչպես այդ օրերի իւնիթության, խառնաշփոթի ու ոգևորության մեջ, մինչև մեր պաշտոնների սպաննառումը, ես կարողացա զսպել ինձ ու չգրկել Զեմիլեին: Մուհարեմի ու ինձ համար ունեցած նրա մրգահոգության մեջ այնքան մանկական բան կար: Նա չէր կարողանում ոչ ուրեմն, ոչ քննել. նրա դեմքը մահացու գունադր էր, խոշոր աչքերը՝ մրգահոգ ու արցունքով մշուշված: Ինձ թվում է՝ Փաշայի կինը կրահել էր մեր գաղփնի սերը:

Մեկնելու նախորդ գիշերը բարձիս վրա գրա վարդեր, որոնք Զեմիլեն քաղել էր քան պարբեզից: Դրանք դեռ պահպանել էին մթնշաղի ու աղջկա աննման մաքների անուշահոգությունը: Զեմիլեն ծաղիկները կապել էր իր թաշկինակով: Դրան կցված էր մի փոքրիկ բացիկ, որի վրա գրված էր՝ Թորոսյանին՝ Զեմիլեից: Նա ավելին չէր կարող ասել իր սիրո մասին, եթե նույնիսկ նրան առնեի ձեռքերիս մեջ ու...

Դուք երբեքեն ժապացե՞լ եք ու միևնույն ժամանակ գիշակցել, որ ժպտում եք մի բանի համար, որ ձեզանից շատ ավելի ազնիվ է ու մեծ: Երբեքեն խոսե՞լ եք արագ, թեթև, սահուն, սակայն միևնույն ժամանակ գիշակցել, որ հիմար թութակի

պես արդասանում եք նույն բառնրը: Մեր մեկնումից առաջ՝ վերջին նախաճաշի ժամանակ, Մուհարեմն ու ես փորձում էինք գրուց վարել ու զգում էինք ճիշդ նկարագրածին պես: Փաշայի գրուսը, որ նա միշտ հպարփ ու բարձր էր պահում, հիմա խոնարհված էր: Քաղցրիկ Զեմիլեն անօգնական շուրջն էր նայում, սակայն փորձեց ժպիալ, երբ Մուհարեմը կարակռվ գրագ եկավ, որ մննք կվերադառնանք երեք շաբաթից: Ոչ ոք ուրեմնիքին չղիպավ, և լարվածությունն այնքան էր թեժացել, որ ինձ թվում էր, թե հիմա ինչ-որ մեկը կգոռա: Ես ինձ անօգնական էի զգում, խղճուկ:

Չիերի սմբակների ճայնը մանրախճի վրա անսպասելի փրկություն բերեց անդանելի դարձած լարվածությունից: Մուհարեմի պես ես էլ նրանց ահավոր խղճում էի, սակայն թվում էր, թե հիմարությունն է նման աղմուկ բարձրացնել մի բանի շուրջ, որը, մեր համոզմամբ, պարզապես մի դարպարկ ժամանց է լինելու:

Բաց լուսամուտներից լսվեց ծիերի խրինջյունը: Փաշան վեր կացավ, ու մննք հասկացանք, որ դեպի արկածներ փանող մեր ուղևորությունը վերջապես սկսվում է: Հանկարծ Մուհարեմի մայրը նրան մի կողմ կանչեց՝ ասելով, որ հապուկ բան ունի նրան հաղորդելու: Դա այնքան անսովոր վարվելակերպ էր բացառիկ շարժումն ունեցող այդ կնոջ համար (նա թեև կարարյալ սիրալիր էր, բայց և խսքորեն հետքում էր վարվեցողության կանոններին), որ չէր կարող չհարուցել զարմանքս: Ես չկարողացա նաև զսպել անվայնուց հետքաքրքրասիրությունս ու մի հպանցիկ հայացք ներկեցի նրանց կողմը: Մուհարեմի մոր ձեռքերի ու գլխի շարժումներից հասկացա, որ նա խոսում է Զեմիլեի մասին, և նրանք այնքան հեռու չէին, որ ես չնկարեի Մուհարեմի դեմքի զարմացական արդահայդությունը: Մեկնելու խառնաշփորի ու շրապողականության այդ պահին ես դրան կարևորություն չդրվեցի, սակայն ավելի ուշ գիրակցեցի դրա նշանակությունը: Շաբ ամիսներ անցան, մինչև ես հիշեցի այդ պահը՝ Մուհա-

ունմն ու նրա մայրը կանգնած զրուցում են:

Փաշան մոդեցավ նախ Մուհարեմին, ենքո ինձ ու մոայլ համբույրներ դրոշմեց մեր ճակապներին:

Նեփո, մինչև որևէ մեկը կպիլակցեր, թե դա ինչպես կապարվեց, մենք արդեն հայրնվեցինք կառքերում, որոնք դանում էին մեզ դեպի ծովափ: Փաշան, Մուհարեմը և ես նադել էինք մի կառք, իսկ Մուհարեմի մայրն ու քոյրերը հեփեսում էին մեզ մյուս կառքով: Շուրջով մեր ճանապարհին դեսանք բրիգադային գեներալ Շուրջի փաշայի՝ Մոնասդիրի բանակային կորպուսի հրամանավարի կառքը: Ես ժպկացի Մուհարեմին, քանզի գիտեի, որ կառքում էր փաշայի դուսպր Նորին՝ Մուհարեմի սիրած աղջիկը: Նորին նույնքան հանդուզն էր, որքան իմ Զեմիլեն՝ երկուով: Հիշում եմ, թե ինչպես նրա հրավերով Մուհարեմն ու ես, խախվելով հարեմի բոլոր օրենքները, երեք ժամ անցկացրինք Նորիին ու նրա բարեկամների ենք, մինչ փաշան ու նրա գրիկինը պաշտոնական ընդունելության էին, իսկ հսկա, սև արար ներքինին՝ հարեմի հսկիչ Նարեմ Ազասին, ձևացնում էր, թե իրը չի գենանում կապարվածը, իսկ պալատի հսկչները նայում էին լուսին: Բարեբախսդաբար գեներալները, գոնե թուրք գեներալները, մեծ աղմուկով են զնում-զալիս, և շեփորի ձայնն էլ ազդարարեց փաշայի վերադարձը: Բարյացակամ մի ծառա մեզ լուր անցկացրեց սրահի միջով, մեկուսի միջանցքով և դուրս բերեց պալատից փոքրիկ ու գողտրիկ դարպասի միջով, որ ծածկված էր վարդերի թփերով:

Նեփո արդեն մենք ծովափին էինք: Նորին՝ համարձակ ու չափազանց սիրահարված, նորից ընդդիմացավ ստվորույթին և արագ բարձրացնելով փարաջան՝ համբուրեց Մուհարեմի շուրթերը: Ես մդածեցի, որ պարերազմն այնքան էլ ահավոր բան չէ, եթե դրա հովանու ներքո երիդասարդ թուրք կանայք կարող են հրապարակավ համբուրել իրենց սիրեցյալների շուրթերը:

Զեմիլեն կանգնած էր մոր կողքին: Ես համբուրեցի նրա ձեռքը և նրա աչքերում, խոշոր սև աչքերում, որոնց մեջ խաղում

Էին լույսն ու արվերը, կարդացի այն, ինչը միայն ինձ համար էր:

«Նչեց սուլիչի ծայնը, մենք ճպրացրինք կրունկները, զինվորական պատիկ փվեցինք և Ալահին ուղղված աղոքքների աղմուկի ներքո վերջապես մեկնեցինք: Կանգնել էինք նավի բռնաձողի մոտ. մեր միջն հայրնեց ծովը, որը կարծես եեւր էր մղում ցամաքը: Ես Զեմիլեին թափահարում էի այն փոքրիկ թաշկինակով, որով նա կապել էր Վարդերը: Նա ինձ օդային համբույր ուղարկեց, և ցամաքն ավելի ու ավելի հեռացավ: Ես նայում էի երկար, այնքան ժամանակ, մինչև նա անհերացավ գրաբածության գաղտնիքներում...»

Այդ օրը ոչ Սուհարեմը և ոչ ես շատ չխոսեցինք: Երբ իշավ գիշերը, մենք կանգնած էինք կողք կողքի, բռնաձողի մոտ ու նայում էինք անհանգիստ ծովին: Ես եիշում էի ուրախ պահերը՝ դրանց մեջ դիսնելով այն դիմությունը, որն անխուսափելիութեան առկա է երաժեշտի մեջ:

ԳԼՈՒԽ 3

ԴԱՐԴԱՌԵԼԻ ԾՈՎԱՍՄԱՐՏԵՐԸ

Մշուշով մի առավորի ինձ՝ երիտասարդ սպորտայաս կրթսեր լեյքիննանդիս, որ դեռ կրում էր ուսումնարանի դրոշմը, ափ հջեցրին Գալիպոլիի թերակղզու վերջին կերպում։ Դիմա արդեն ես Էրթողորուլի բերդամասի մարդկոցի հրամանադրան էի։ Նանկարծ այս «պատերազմ» կոչվածը չափազանց լուրջ բան դարձավ. սա այլևս կարակ չէր։ Ես պատրասխանագործ էի բերդամասի համար և պետք է ինչ-ոք բան անեի։ Կարծում եմ՝ երբ ընդունեցի հրամանադրությունը պատրասխանագործությունը, ինձ նայում էին որպես մի թյուրիմացության, որպիսիք համարվում են բոլոր կրթսեր լեյքիննանդները ողջ աշխարհում։ Սակայն իրականում ես քաջ գիշտակցում էի իմ պատրասխանադրվությունը, ուստի վճռեցի անմիջապես սրուցում անցկացնել բերդամասում։

Արագ նկարեցի որոշ բաներ.

1. Էրթողորուլի բերդամասը չափազանց բարենպաստ դիրք ուներ և, անկասկած, Դարդանելը հսկող ամենակարևոր ամրակերպից է։

2. Եթե թշնամին եռյս ուներ առաջ ընթանալու, ապա սրբիակած կլիներ իր առաջին գրոհները կարարել այս կերպի վրա։

3. Պատերազմը ամենաին էլ զվարճալի չէ։

4. Մարդկոցը կազմված է երկու՝ 25.5 սմ բրամաչափի կրուպի թնդանոթներից, որոնք գեղակայված են մուգրի մարդկունու պարպիկող հիմքի վրա և կարող են կրակել ցանկացած ուղղությամբ։

5. Դրանոթային արկերից յուրաքանչյուրը 650 կգ քաշ ունի։

6. Բարաքները, որ շարված են գրեթե ուղիղ գծով, թնդանոթների հետևում են՝ մոդավորապես 125 մ հեռավորության վրա:

7. Կայագորը կազմված է 115 գինվորից, ովքեր չափազանց զբաղված են կամ ամրագծերի վերանորոգմամբ, կամ սննդամթերքի ու զինամթերքի պաշարներ հավաքելով: Շորջբոլորն այնպիսի նոուզեր եր, պարագարվածության այնպիսի դպավորություն, որ ինձ թվում եր, թե ամեն բոպե կարող են հայդնել թշնամու նավադրմի հայդնվելու մասին:

Ավարդելով վենչական սպուգումն՝ ես քաղաքավարության այց կափարեցի Էրթողրուլի բերդամասից մոտ մեկ մղոն հեռավորությամբ զբնվող ավելի մեծ Սեղ-ու Բահրի բերդամասի հրամանավարին: Նկարեցի, որ դրա մնձության ու ակնառու դիրքի շնորհիվ այն հեռվից կործանելն ավելի հեշտ կլինի, քան իմ փոքրիկ բերդամասը՝ երկու թնդանոթից բաղկացած մարդկոցով:

Սեղ-ու Բահրի բերդամասում, որի հիմնական մարդկոցը կազմված էր հինգ ոչ հեռահար թնդանոթներից, դիրում եր նույն սպասողական մքնուրսոր, վերահաս փոթորկի նույն զգացումը: Այն օրվանից, երբ մեկնեցինք Փաշայի պալատից, աշխարհը կարծես անհմասս հիսուսներիայի մեջ եր:

Էրթողրուլի բերդամաս վերադառնալուց հետո ես ուշադիր զննեցի Դարդանելի ամրակենթերի քարվեզները և հայդնաբերեցի, որ նեղուցից այն կողմ՝ անապոլիսական կողմում, գրնվում են Քում Քալեհի և Օրխանիեի բերդամասերը՝ մոդավորապես նույն չափի, հզորության ու պաշտպանական գծերով, ինչպես Էրթողրուլի և Սեղ-ու Բահրի բերդամասերը:

Ի հավելումն չորս բերդամասերի, որ Խակում էին Դարդանելի մուլքը, դարածքը Խակում էին նաև ինն այլ ամրակենթեր. հինգը՝ վենակայված Դարդանելի ասիական դափնարակ ափին, մյուս չորսը՝ Եվրոպական ափի հարթ մասում: Դրանց ընդհանուր հզորությունը կազմում էր մոդավորապես 35 թնդանոթ: Դրանցից միայն չորսը կարող էր կրակել 14000 մ

հեռավորության վրա, վեցը՝ 10000 մ, իսկ մնացածը՝ 8000 մ: Բոլոր թնդանոթներն անշարժ գրեսակի էին՝ ցեմենտի եիմքի վրա ամրացված, ու շրջվում էին միայն 45 ասդիման: Ես հիշեցի Գերմանիայում անցկացրած ամիսները, այն ժամանակակից մարդկոցները, որ գրեսել էի այնպեղ և բազում այն ժամերը, որ անցկացրել էի՝ խորենով մեր ամրակերերի վիճակի մասին: Ես մրածում էի, որ ռազմանավերի վրա գրեադրված թնդանոթների միջին հեռահարությունը հավանաբար 20000 մ է, և ուսերս թոթվեցի:

Մի քանի շաբաթ մենք սպասողական վիճակում էինք՝ պարրասպ, աչալուր, լարված: Ամեն առավոք ծովի հեռվում գրեսնում էինք անվերջ պարեկություն իրականացնող բրիդանական գորպենային ռազմանավեր. ամեն երեկո, երբ վերջալույսն իջնում էր աշխարհի վրա ու վրան քող փռում, մթության մեջ գրեսնում էինք բրիդանական նավերի ուրվագծերը, որ անհանգիսպ պարփակում էին ծովում: Երեք շաբաթ անցավ առանց միջադեպի:

1914 թվականի նոյեմբերի 3-ի առավորյան՝ Թուրքիային պարբերազմ հայրարարելուց երկու օր առաջ, ինձ արքնացը ին ու գեկուցեցին, որ բրիդանական ու ֆրանսիական ռազմանավերը մոփենում են և ամենայն հավանականությամբ պարբրասպրվում են գրոհելու:

Ես հրամայեցի կայազօրի գինվորներին զբաղեցնել դիրքերը, պարբրասպել թնդանոթները, իսկ ինքս շրապեցի իմ դիմակետ, որը գլուխում էր Աշշի Բարա լեռան վրա, և որդեռից երևում էր ողջ բերդամասը: Ես գեկույց ուղարկեցի շրաբ-կայան և սպասում էի հերքագա կարգադրությունների: Դրանք դեղ հասան մարդկանց պարբրասպ պահելու և գործողություններ չնախաձեռնելու հրամանի ձևով:

Անզիական ու ֆրանսիական ռազմանավերը հայդնվեցին, իմ գնահարմամբ, 12000 մ հեռավորության վրա ու սկսեցին եռություն ունբակոծել Սեղ-ու Բահրի և Քում Քալեհի բերդամասերը: Կես ժամ ունբակոծելուց հետո՝ առավորյան ժամը

7-ին, նրանք ենք քաշվեցին:

Ես մըրադիր էի լրել դիրքակեփս, երբ ենչեց մի ահավոր պայթյուն, ու գերինը ցնցվեց, ինչպես երկրաշարժի ժամանակ: Ես վազեցի դեպի հեռախոսը ու կապվեցի շրաբ-կայանի ենք: Ինչ է պարահել՝ ոչ ոք զգիպեր: Սակայն շուրջ իմացանք, որ բրիդանական ռազմանավից արծակված ականը օդափոխման ճեղքից ընկել է Մեղ-ու Բահրի զինամթերքի պահեստի վրա, և այնպես պարսպարված հինգ հարյուր սպաներ ու զինվորներ սպանվել, բառացիորեն կրոր-կրոր են եղել: Գնդապետ Հալի բնյը միակն էր, որ փրկվել էր: Երբ ես լինա նրան, կրած ապրումներից դեռ կիսախենթ վիճակում էր:

Այս «պարերազմ» ասվածը բավական փեաճ բան դուրս եկավ, և ես սկսեցի ավելի շապի մրածել Էվերեկում գրինվոդ իմ ծնողների ու Ձեմիլեի մասին: Օրեցօր նվազում էր վստահությունս, թե ես կկարողանամ հաղթահարել բոլոր խոցնդոքները: Նվազում էր նաև իմ վստահությունը, թե ես երջանիկ մարդ եմ:

Մենք սպասեցինք ևս եինք շաբաթ՝ անորոշության շաբաթներ, անվերջանալի ու միապաղադ սպասման շաբաթներ: Վաղ թե ուշ խնդիրը պետք է նորից ծագեր, և բրիդանական ու ֆրանսիական ռազմանավերը նորից պետք է հայտնվեին մեր առջև, բայց ե՞րբ... Եվ ինչո՞ւ են հապաղում: Եվ նորից բրիդանական գորպեղային նավերի միապաղադ ու համար պարեկությունը:

Դեկտեմբերի 13-ի ցերեկը, երբ ես Մեղ-ու Բահրի բերդամասում սպայական հավաքի էի, թնդաց ևս մեկ ահավոր պայթյուն: Մենք բոլորս սլացանք դեպի մեր դիրքակեփերը, սակայն մշտապես ներկա գորպեղային նավերից բացի թշնամու այլ նշաններ չկային: Նեղուցի կողմից մեզ էին հասնում մարդկանց հազիվ լսելի ձայններ, սակայն մեր դիրքերից ծովին նայելիս ոչ չեր երևում:

Հրամանադրար գեներալի գրասենյակից շուրջ մեզ փեղե-

կացրին, որ թուրքական «Մետոդի» ռազմանավը հարձակման է ենթարկվել սուզանավի կողմից և խորբակվում է:

Ես լրեցի դիրքակելու ու պացա դեայի մոդակա քարձունքը: Այնքեղի գրեա, թե ինչպես նավը խորբակվեց. նաի՝ առջևի մասը, հետո՝ նավն ամբողջությամբ: Ես գրեանում էի նավասրիներին, որ խուճապահը վազում էին դեայի փրկամակույկները, մյուսները նավից նեփամում էին ջուրը: Այդ ամենը մի քիչ խենք ու մի քիչ անհավաքալի էր թվում: Դա նման էր ծովային աղեք պարկերող նկարի: Անբնական էր: Զրի մեջ ամենուրեք մարդիկ էին երևում: Նավը սուզվում էր, չորս կողմում փրկամակույկներ էին պարպատում, մարդիկ լռում էին այս ու այն կողմ: Երբ նավը վերջնականապես սուզվեց, հենքնից գոլորշու հսկա մի ամպ գոյացավ:

Ներազայում գրեղեկացանք, որ թշնամու սուզանավը մեծ վարպետությամբ գրասը մղոն խորացել էր նեղուցի մեջ՝ խուսափելով անթիվ ականներից: «Մետոդի» վրա հարձակումն այնքան անսպասելի էր, իսկ հարվածը՝ այնքան հուժկու, որ նավի վրա զդունվող անձնակազմի երկու հարյուրից ավելի անդամներ զնիվեցին: Կես ժամվա ընթացքում ամեն ինչ ավարբված էր:

Ես սկսում էի հասկանալ, որ պարերազմը եզր ու դաժան, կործանարար ուժ է:

Դրանիներն եցզրեթերկու ամսվաանգործությունը: Տորպեդային նավերը շարունակում էին անվերջ պարպել հեռվում, իսկ մենք պարբասրվում ու սպասում էինք, սպասում էինք ու պարբասրվում: Ես սկսեցի մրտել. «Ի վերջո, պարերազմը մի քանի չափազանց թանկ ու դժբախտ պարահարների շղթա՞ չէ, պարահական մի ռումբ և մի սուզանավ, որին հաջողվեց դիպուկ հարված հասցնել»:

1915 թվականի փետրվարի 18-ի առավույան մեջ ողջունեց մի նար ծայն. երկնքից լսվեց շարժիչների գվոցը: Թշնամու երկու մեծ ինքնաթիռները, թռչելով մեր հնառն հակաօդային թնդանոթների հասանելիությունից դուրս, թռուցիկների

երկու կապոց ցած նեփեցին մեր դիրքերի վրա ու շրջվեցին դեպի ծովը: Երբ կարդացի այդ թռուցիկները, մրածեցի, որ մասնակցում են ամենազարմանալի պարտերազմի. թռուցիկներում ասված էր, որ անգլո-ֆրանսիական միացյալ ուժերը պարտասպարզում են մեծ հարձակման: Ես թռուցիկներն ուղարկեցի հրամանափարին՝ գեներալ Զևադ փաշային, և որքանով ինձ հայրնի է, դրանք մինչ օրս պաշտոնական փաստաթղթերի մաս են կազմում: Մեր թշնամին ոչ միայն կործանարար էր, այլև քաղաքավարի:

Թուղթ ամրակենքերին հրամայվեց պարտասպարզել, և այդ նույն ժամանակ իմ դիրքերի ճիշդ դիմացը գրնվառ Օրխանին միեր բերդամասում գերմանական հրեփանային մարտկոց վեղակայվեց:

Ողջ օրս անցկացրի՝ սպազելով մեր ամրակենքերի վիճակը, մեր գենքերն ու մարդկանց պարտասպարզությունը: Երբ գիշերվա կողմ վերադարձա կացարան, սկսեցի խորիել դաշնակիցների ռազմավարության մասին: Խոշոր ծովային ճակարամարդերի վերաբերյալ լորեր չկային, և այս պահին գերմանական հիմնական նավազորմը կարծես թե ապահով կերպով մեկուսացված էր: Ուրեմն ինչո՞ւ էին հապաղում Միջերկրականում գրնվող անգլիական ու ֆրանսիական նավերը մեր դիրքերը գրանցելու հարցում: Ինչ էր նշանակում նոյեմբերի 3-ի այդ անեռանդ հարձակումը: Ինչի՞ համար էր ասպեկտական գգուշացումը վերահաս հարձակման մասին: Միթե նրանք այնպիսի արեամարիանքով էին վերաբերվում մեր ամրակենքերին և մեր կարողություններին, որ մեզ ենք քաշվելու հնարավորություն էին փալիս: Կամ գուցե, մրածում էի ես, անզլիացիներն ու ֆրանսիացիները չե՞ն ցանկանում գրավել Դարդանելը: Սակայն դա անհեթեթություն էր թվում:

Մդմորումներս միայն պարտերազմական ռազմավարության գաղփնիքների շուրջ չէին: Ինչ է լինելու վաղը: Ես համոզված էի, որ մենք մեծ ճակարամարդի շեմին ենք, իսկ ես ոչ այնքան լարված էի, որքան անփարբեր: Սա կարող է անհավանական

թվալ, սակայն... շար էի երիտասարդ, և մեծ էր խոշոր ճակարանարդ գրեսնելու սպասումը:

Ես ինձ շար միայնակ էի զգում: Վերջապես հուսահագությունից զանգահարեցի Մուհարեմին՝ Գյխավոր շրաբկայան, որը մովք գրասնինգ մղրն ենուու էր: Մենք շուրջ գրասը բռայե զրադեցրինք կարևոր նշանակություն ունեցող ենուախոսագիծը՝ սիրով գրալով միմյանց երկու վախեցած օդիորդների նման: Ինձ չսփոփեց նույնիսկ այն, որ, ըստ Մուհարեմի, ամրակերպերը քննարկելու ժամանակ Գյխավոր երամանագրար Զևադ փաշան ասել էր՝ չնայած իմ երիտասարդ գրադիքին՝ նա մեծ հույսեր է կապում իմ կարողությունների հետ և վսկահում է իմ դարտողությանը Էրթողրուլի երամանագրարությունն իրականացնելու հարցում: Ինչ վերաբերում է ունակություններին, ապա դրանք ինձ վսկահություն չեն ներշնչում, իսկ իմ կողմից արվող ցանկացած դարտողություն հավանաբար սխալ կլիներ:

Քունս չէր գրանում. զլիսիս մեջ բազում մքրեր էին պարպիսմ՝ մքրահոգություններ ու հիմնախնդիրներ: Ես մքրորում էի այն աղով ու անորոշ լուրերի շուրջ, որ պարպիսմ էին սպայական շրջանում այն մասին, թե Թուրքիայի ներքին շրջաններում շար անհանգիստ մթնոլորդ է գիրում, և որ Հայկական հարցը վերսպին լուրջ խնդիրների գեղիք է գրալս: Թուրք առաջնորդներն ունենին սեփական լուրջ խնդիրները: Ես գիրեի, որ նրանք մքրածում են, որ Հայկական հարցը պեսք է լուծել իրենց համար ավանդական և ենարավորինս արագ մեթոդով՝ կառավարության կողմից կազմակերպված ջարդերի միջոցով: Որոշակի ոչինչ դեռ չկար, սակայն ես լավ էի իիշում պարանեկությունս և ժողովրդիս պարմությունը:

Հարազարնե՞րս... Վեց գրադի է, ինչ նրանց չեմ գրեսել: Եղբայրներս հեռացել են գնից, մնացել են ծերացող հայրս, մայրս և քոյրս, որ դեռ մանկահասակ էր, երբ ես հեռացաց: Ի՞նչ է լինելու նրանց հետ: Ի՞նչ է լինելու նրանց հետ, եթե ես զոհվեմ: Ես արդեն գրեսել էի պարերազմը՝ գիրակցելու համար,

որ մահը իրապես կարող է վերջ դնել արկածներին: Քանի դեռ ողջ էի, համոզված էի, որ որպես թուրքական բանակի սպա կարող եմ վսփահ լինել, որ նրանք պաշտպանված են: Կյանքիս այս առաջին ճգնաժամի ընթացքում ես մրածում էի հարազարդներիս մասին ավելի շատ, քան երբեմ: Այդ գիշեր անհանգիստ քննեցի:

Փերքրվարի 19-ը դաժան ցուրք օր էր: Ծռվից ծանր ու դանդաղ բարձրանում էր թանձր մառախուղը: Ես վաղ էի արթնացել և ժամը վեցին եղոր հեռադիրակով զննում էի չորս կողմս, երբ նախ երկնքում սև ծուխ հայրենիքեց, հետքո հեռվում ասդիմանաբար նշնարվեցին առաջ սլացող քսանչորս ռազմանավերի ուրվագծերը: Պահպանելով մշտական կապը շրաբկայանի հետ՝ նայում էի, թե ինչպես հորիզոնին երևացող ծխի ամպիկներն ասդիմանաբար խոշորանում ու ավելի չարագուշակ գտնաք էին սրբանում: Ես չգիտեի, թե դրանք ինչ արագությամբ են շարժվում: Գիրեհի միայն, որ դրանք շատ արագ են մորթենում:

Շրաբ-կայանից ինձ իրամայեցին կրակ չբացել, մինչև թշնամին չսկսի հարձակումը, ուստի ես զինվորներիս իրամայեցի ռումբերից պաշտպանվել խրամագներում, մինչև աներաժեշտ լինի գործի դնել թնդանոթները:

Ես հարգանքով էի վերաբերվում թշնամու ռումբերի չափսերին ու հեռահարության հնարավորություններին: Մրգածում էի՝ արդյոք կրակ բացելու որևէ հնարավորություն կունենանք, թե ոչ: Ես հասկանում էի՝ եթե թշնամին բացահայտի մեր դիրքերը և հարվածի, ապա իմ փոքր բերդամասը շատ արագ կոչնչանա:

Առավորյան ժամը 7³⁰-ին ֆրանսիական ռազմանավերը դիր-քավորվեցին Դարդանելի նեղուցի աջ մասում, մինչդեռ անգ-լիացիները գրադեցրին ճախակողմյան դիրքը՝ ափից մոտ 10000մ հեռավորությամբ: Այսուհետեւ հետքեց սարսափելի լարված լուսություն՝ չարագուշակ ու սպառնալից: Դա, անշուշփ, կյանքիս ամենաերջանիկ պահը չէր:

Այսոդ ընթացքում ռուսական «Ասկոլի» հածանավն օգտագործվում էր հսկողություն իրականացնելու նպարակով, քանի որ ոչ մի փորձ չէր ձեռնարկում մասնակցելու պարրասպրվող գրոհին:

Ժամը 8⁰⁰-ին Օրիսանիեի բերդամասում գիրնվող գերմանացիները, չկարողանալով այլևս լարվածությունը փանել և հակառակ ընդհանուր հրամանին, թշնամու գրոհին սպասելու փոխարեն կրակ բացեցին: Նշանառությունն ահավոր էր, քանի որ ռումբերն ընկնում էին թիրախներից շար հեռու՝ ողբարձրացնելով ջրի հսկայական գորշագույն ամպեր:

Թշնամին կարծես հենց դրան էր սպասում, քանզի այդ համազարկից հետո խառնակություն սկսվեց, և նրանց ողջ նավապորմը անխնա պարփակիան կրակով ռումբերի այն-պիսի անձրև թափեց բերդամասի վրա, որ շար շուրջով այն դարձավ ափին վառվող մի հսկա խարույկ: Շինությունները կորան կրակի մեջ. օդում պլուրվում էին կործանված բերդամասի բեկորները, և վեր էին բարձրանում ծխի հսկայական սյուներ:

Հանկարծ մղոնների երկարությամբ ողջ ծովակնյա գիծը պայթեց ահավոր ժայթքող բոցերով. թշնամին նորից հարվածեց՝ այսանգամ թնդանոթներն ուղղելով Սեղ-ով Բահրի և Զում Քալեեի բերդամասերի վրա: Այնքեղ, որպես ես էի կանգնած, սկսեց ցնցվել հուժկու երեսքակնությունից: Ծխի անթափանց ամպերի պարճառով մի քանի մղոն հետափորությամբ ոչինչ չէր երևում: Դրեպանավորներիս համար ուղիղ նշան բռնելն անհնարին դարձավ: Տասը անհասցե կրակոց արձակելուց հետո ես հասկացա, որ վարդնում ենք զինամթերքը և այդ մասին դեղեկացրի գնդի հրամանադրությանը: Դրամանադրարը՝ գնդապեկ Հայի բեյը, ինձ հանձնարարեց գործել ըստ նպարակահարմարության:

Ոռավույյան ժամը 10³⁰-ին ես հրամայեցի զինվորներիս պարփակարվել զինանցում, իսկ ինքս վերադարձա դիրակեվ: Ուշադիր հետևում էի թշնամու գրծողություններին:

Նեղուցը վերածվեց խենթանոցի, դժոխքի, խելագար աշխարհի ցնորական մի պարկերի, որը նավերի, կրակոցների, ռումբերի պայթյուններից օդ բարձրացող, եռացող ցեխի հսկայական կրոյփերի խառնուրդ էր: Ռումբերը թռչում էին բոլոր ռողդություններով՝ առանց նպարակի, անհմասիր: Ռողը ռորբերիս դրակ դրդում էր, իսկ ահավոր աղմուկից գլուխ ցավում էր այնպես, ասես հիմա կպայթի:

որպես կանոն՝ անակնկալ մի քանի գերի, ու մենք անհետանում
էինք...

Դերաթի պաշտպանությանը շփառող սփորաբա-
ժանումները ոչնչացնելուց հետո մենք գլխակորույս սլացանք
նահանջող բանակի մյուս հարվածի հետևից ու «Շեյխ
Միսրին» կոչվող վայրում հասանք նրանց: Դա դեղի ունեցավ
սեպտեմբերի 24-ին. ընդհարումն արյունավի էր, քանզի մենք
սրերով գրոհում ու ճանապարհ էինք հարթում նրանց շարքերի
միջով: Թուրքերը մարդկային ծանր կորուսիքներ էին կրում:

Մի փոքր նահանջ, մի քիչ հանգիստ... և նորից կիրում
ենք թուրքերի հաղորդակցության բոլոր լարերը՝ այս անգամ
Գլխավոր շփաքի ու բերդամասերի միջև:

Մեզ լավ լուրեր են հասնում. դեղեկանում ենք, որ շերիֆ
Էմիր Ֆեյսալի հրամանադրությամբ կովող հզոր արաբա-
կան բանակը և յոթ այլ առաջնորդներ միասնաբար հարձակում
են գործել թուրքերի Դերաթի հենակետի վրա, ամբողջովին
շախչախել են այն ու սդիպել այնպես դեղակայված Չորրորդ
բանակին փախուստի դիմել:

Այժմ սկսվեց Մերձավոր Արևելքում ընթացող պատե-
րազմում մեծ նշանակություն ունեցող նահանջը: Իրարից
ընդամենը յոթ կամ ութ մղոն հեռավորությամբ գինվող Յոթե-
րորդ, Ութերորդ ու Չորրորդ բանակները իրար միանալու ոչ
մի փորձ չձեռնարկեցին: Նրանք սաեւ քարացել էին վախից ու
կադրայալ խառնաշփոթի մադրնված՝ ողջ ուժով սլանում էին
դեպի Դամասկոս՝ պաշտպանության իրենց վերջին ամրոցը:

Նախկինում երբեք վրիժառությունն այնքան դաժան չէր
ընկել իր զահերի գլխին, որքան արաբների ձեռքին թուրքերի
կրած պատիժը: Էմիր Ֆեյսալը և նրա հզոր բանակը մինչև

վերջ հետապնդեցին Չորրորդ բանակին. նրանք անողոքաբար ջարդում էին թուրքերին, ու թուրքերի հետևից արյան գետեր էին հոսում:

Յոթերորդ և Ութերորդ բանակներին հետապնդող իմ ուժերը օրեցօր աճում էին, քանի որ մեզ էին միանում հարյուրավոր արաբներ՝ երկրի ներքին շրջանների զյուղերից, ու առանձին ցեղեր: Ի վերջո նրանց թիվը հասավ վեց հազար ծիավորի, որոնցից յուրաքանչյուրն ավելի անողոք ու արյունախում էր, քան մյուսը:

Ին ողջ զինվորական փորձառության ընթացքում ես երբեմ չեի փեսել նման սասպիրիկ մեծ ցանկություն, անպարմելի քաջություն և կարգապահություն, ինչպիսին՝ անապարի այդ ծիավորների մով:

Հանձնվելու մասին խոսք անգամ լինել չեր կարող. թուրքերը գիրքեին, որ փրկություն չկա: Սա, հավանաբար, պարերազմի ամենաարյունալի նահանջն էր: Մենք, իհարկե, ժամանակ առ ժամանակ քննում ու հանգստանում էինք, սակայն այս հետապնդման արշավի ընթացքում, կարծես, գեթ մի պահ ոչ մի աչք չեր փակվում, և ոչ մի մկան չեր թուլանում: Ես զիշավորում էի կործանիչ ու անխափան գործող մի մեքենա, որի շարժիչ ուժը ավելությունն էր: Ին մեջ ամեն զգացմունք մեռել էր, ու ես անդարձեր էի դարձել մահվան հանդեպ՝ անկախ այն բանից՝ մաս էի բերում, թե փախչում դրանից:

Մեպիեմբերի 13-ի առավույան ժամը 5³⁰-ին մոտ մենք հայրեն-վեցինք Դամասկոսից յոթ մղոն դեպի հարավ գինվող կերպում: Ես զգում էի, որ թշնամին կփորձի լքել քաղաքն ու փախչել, ուստի միջոցներ ձեռնարկեցի այդ ծրագիրը խափանելու համար: Ես երամայեցի զորքերիս ամենայն արագությամբ սլանալ հյուսիսարևմուրյան ուղղությամբ՝ դեպի քաղաք Կանոն զիշավոր մայրուղիներից մեկը: Ժամը 10³⁰-ին մենք հասանք մի կերպի, որպես ճանապարհը կդրուկ իշնում էր, ու այնպես դարան միանք:

Կեսօրից շատ չանցած՝ հեռվում լսվեց ծիերի սմբակների

Դրվագունը: Մի քանի բոպե անց լեռան գազաթից մեր դիվարդները փեղեկացրին, որ սրնթաց մորենում է թուրքա-կան Յըլդըրըմ հեծելազորը, որի հետևից ընթանում են հետևակայինները:

Մարդկանց հրամայեցի ձի հեծնել, ու նրանց ռազմաշունչ կոչերի «հռնչյունը» գրեթե խլացրեց պացող ձիերի ամպրոպային դրվագունը: Արաքները խելահեղորեն խրվեցին թուրքերիշարքերի մեջ՝ կրթելով, ջարդելով ու սրերը խրելով ապշահար թուրքերի մարմինները: Անակնկալ ցնցման առաջին պահերից հետո թուրքերը փորձեցին հավաքել ուժերը և կռվով ճանապարհ հարթել: Նրանց կորուսքներն ահռելի էին, կրիվ՝ անողոք ու արյունալի: Մեկ ժամ անց արդեն թուրքական բանակի մնացորդներն արագ նահանջում էին դեպի քաղաքի դարպասները:

Մենք չենքապնդեցինք նրանց: Ես հրամայեցի իմ հեծելազորին վերադառնալ Քիսվե՝ Դամասկոսի արվարձաններում գտնվող փոքր գյուղը, որը, իմ համոզմամբ, գտնվում էր շերիֆ Էմիր Ֆեյսալի կողմից հետապնդվող թուրքական Զորքորդ բանակի ճանապարհին: Ես փորձելու էի կրթել թուրքերի ճանապարհն ու ձախողել նրանց առաջընթացը դեպի Դամասկոս: Ֆերեկը ժամը չորսին երևաց կարարյալ խառնաշփոթի մեջ շարժվող Զորքորդ բանակը: Եվ նորից փոթորկի պես, գոռում-գոյցունով ճերմակահանդերձ վայրենի ծիավորները վրա հասան ու հարյուրներով կովորեցին նրանց: Մեր հարձակումն այնքան անսպասելի էր, իսկ հարվածը՝ այնքան հարու, որ թուրքերը պաշտպանվելու փորձեր գրեթե չձեռնարկեցին: Մենք պարզում էինք նրանց շուրջը, ներխուժում նրանց շարքերն ու անհետանում, մինչ նրանք կկարողանային վերախմբավորվել:

Ժամը 5³⁰-ին թուրքերը հայփնեցին սարսափելի վրանցավոր իրավիճակում: Նրանց առջևում իմ ուժերն էին, հետևից՝ Էմիր Ֆեյսալի բանակը: Բրիդանական զորքը գեներալ Ալենբիի հրամանագրաբությամբ սրընթաց արշավում էր երկրի

ներքին շրջաններով ու կտրում նրանց ճանապարհը ծախ թևից:

Թուրքերը հանձնվեցին ու պացան դեպի բրիգանական պաշտպանական գիծը, քանի որ գիտնին՝ արաբական յաթաղանից փրկություն չկա:

Այդ երեկո ես միացա Նորի Ցուսուֆին ու արար մյուս առաջնորդներին և լսեցի, թե նրանք ինձ ինչպես օրինեցին Ալլահի անունով:

Մեր հաղթանակի կապակցությամբ դեռ ոչինչ չէի զգում: Ես օգնեցի կրունու թուրքական բանակի ողնաշարը, ու կրած պարփությունից թուրքական կայսրությունը սկսել էր փլուզվել: Չորս շաբաթվա ընթացքում թուրքական Չորրորդ, Ցորենորդ և Ութերորդ բանակները ոչնչացվեցին, հազարավոր վիրավորների թաղել էին ճանապարհների եզրերին մեռնելու, նրանցից հազարավորները գերի էին վերցվել: Նրանց գերմանացի դաշնակիցներն այլևս օգնել չէին կարող, քանի որ սպիտակած էին եղած ուժերը գեղափոխել Եվրոպական ռազմաճակար՝ կապարելով վերջին հուսահափ ճիզերը պարփությունից խուսափելու համար:

1918թ. հոկտեմբերի 1-ին միավորված բրիգանա-արաբական ուժերը միան Դամասկոս և գրավեցին քաղաքը: Շերիֆ Էմիր Ֆեյսալը՝ արաբների գլխավոր հրամանադրարը, միայն մի քանի օր անց քաղաք միավ: Նրան ողջունեցին ճոխությամբ ու ծիսակադրարություններով, որը վայել էր հաղթանակած կեսարին: Ցուրաքանչյուր պարուիան զարդարված էր դաշնակիցների դրոշներով: Նշում էր երաժշգություն՝ ռազմական երաժշգություն, լսվում էին ուրախության հախուտն ճիշեր, փիրում էր ոգևորություն ու խառնաշվոթ:

Շերիֆ Էմիր Ֆեյսալը քաղաք միավ ոչ որպես զավթիչ, այլ զուսպ, արժանապարհիվ մի մարդ. նա ուղղվեց դեպի այն հրապարակը, որտեղ թուրք գեներալ Զեմալ փաշան առանց ռազմական ադյանի ծևականությունների կախաղան էր բարձրացրել գերված ազնվական արար առաջնորդներին:

Շերիֆ Էմիր Ֆեյսալը, որ հզոր, բայց և զգայուն ու բարի մարդ էր, ռազմական վերամբարձ խոսքեր չասաց: Նա բարձրացրեց ձեռքը՝ ի նշան Ալլահին ուղղված երախտագիրության, և շնորհակալություն հայրնեց՝ ընծայված ընդունելության համար:

Իմ՝ Դամասկոս ժամանելու հաջորդ օրը արաբական բանակի մնացած մասը, որին հեփսում էր սայլաշարքը, մփակ Դամասկոս: Նրանց հեփսից ուղղի վրա հայրնվեց նա, ում կոչում էին Հավայա-էլ-Մասրու: Ներգագայում վեղեկացա, որ դա կապիտան Լոուրենսն էր, ներկայումս հայրնի՝ որպես Արաբիայի գնդապետ Լուրենս: Շեյխերն ու նրանց մարդիկ նրան ներկայացնում էին հաշիվները, որոնք վավերացված էին արաբ առաջնորդների կողմից:

Որքանով ինձ է հայրնի, կապիտան Լոուրենսը ոչինչ չէր արել արաբական հեղափոխությանն աջակցելու համար, չէր մասնակցել նաև արաբների մարդավարության մշակմանը: Երբ առաջին անգամ լսեցի Լոուրենսի մասին, նա պարզապես գանձապահ էր, ոչինչ ավելին: Այդպես էր նրան վերաբերվում նաև իշխան Էմիր Արդուլան՝ թագավոր Ֆեյսալի եղբայրը, ում ես լավ էի ճանաչում:

Ես սա չեմ գրում նախագելու համար, ես գրում եմ որպես կռվող զինվոր: Ոմանք կռվում են, մյուսները՝ վճարում:

ԳԼՈՒԽ 16

ԵՍ ՌԱՌԴԻՊՈՒՄ ԵՄ ԵՂԲԱՑՐՆԵՐԻՄ ԵՎ ՍԻԱՌՈՒՄ ՖՐՄՆՍԻՎԿԱՄ ԲԱՄԱՎԿԻ ԱՐԵՎԵԼՅԱՄ ԼԵԳԵՌՆԻՆ

1918թ. նոյեմբերի 4-ին Դամասկոսում լուրեր տպարածվեցին, թե Ամերիկայից ժամանած հայ կամավորականները համաձայնության են եկել ֆրանսիացիների ու դաշնակիցների հետ առ այն, որ թուրքական Կիլիկիա գավառն ապագայում փոխանցվելու է հայերին պետքություն ստեղծելու նպագակով։ Ասում էին, որ նրանք արշավում են Միջնորդականի ափով դեպի Բեյրութ։ Ես բացակայելու թույլպահություն սրացա արաք առաջնորդներից և հայ կամավորներից կազմված ուժահարյուրանոց բանակ հավաքելով՝ մեկնեցի Բեյրութ։

Իմ մեջ կարծես ինչ-որ բան արթնացավ, երբ մեկնելու պահին արաբական շփաքը մեզ ճանապարհեց զինվորական պարիվներով, իսկ դաշնակիցներն ուղարկել էին իրենց ներկայացուցիչներին. դա տպավորիչ փեսարան էր։

Ճանապարհի ողջ երկայնքով մեզ ողջունում էին արաբական գյուղերի բնակիչները, և մեր ընթացքն ավելի շատ գրունական երթ էր հիշեցնում։ Զգացմունքներս արթնացան, ես մրգածում էի՝ արդյոք կրեսնե՞մ եղբայրներիս և երազում էի հնարավորինս արագ մեկնել Հայեա՝ քրոջ հետքից։

Չորս օր անց հասանք Բեյրութ, որտեղ մեզ ողջունեց հայ կամավորների պարվիրակությունը։ Ես անմիջապես հարցրի մի շարքային զինվորի, թե ճանաչում է արդյոք որևէ մեկին լեզենում, ով ծագումով էվերեկցի է։

- Այո՛, պարոն, - պարախանեց նա, - սերժանտը և կապ- րալը՝ երկու եղբայրներ, Էվերեկից են։

- Ինչ է նրանց անունը, - հարցրի ես:
- Քարսեղ և Արամ Թորոսյաններ:

Սիրոս սկսեց ուժգին բարախել, երբ հասկացա, որ շուրջով դժեռնելու են եղբայրներիս, որ Ամերիկայից ժամանած Հայկական լեզեռնի կամավորների հետ միասին դեղավորվել էին այսպես:

Ես զինվորին խնդրեցի իմ ժամանման մասին դեղեկացնել եղբայրներիս, իսկ ինքս սկսեցի անհանգիստ հետ ու առաջ քայլել մռայլ սրահում: Քիչ անց ինձ մոդեցան երկու երիտրասարդներ ու հարցրին.

- Այսպե՞ս է կապիտան Սարգիս Թորոսյանը: Նա մեր եղբայրն է, մենք ցանկանում ենք դժեռնել նրան:

Ես ուշադիր նայեցի նրանց դեմքերին ու հարցրի.

- Կճանաչե՞ք նրան, երբ դժեռնեք:

- Անշուշփ կճանաչենք: Մենք բաժանվել ենք շատ դարիներ առաջ, բայց վսրահ ենք, որ կճանաչենք:

- Շատ բարի, նայեք ձեր շուրջը, վերև բարձրացեք ու երբ գիմնեք նրան, ինձ լուր դրվեք:

Քիչ հետո նրանք վերադարձան ու ասացին, որ չկարողացան գրնել իրենց եղբորը, թեև վսրահ են, որ նա այսպես է:

- Լավ նայեք, նա ձեր առջև է: Նրանք վերջապես հասկացան, թե ով են ես: Մենք գրկախառնվեցինք:

Ներդր նսդիշինք ու սկսեցինք պարմել մեր զիխով անցագնացածը: Իմ պարմությունը նրանց բնավ չուրախացրեց:

Ես դեղեկացա, որ ամերիկյան դեսպանության միջոցով նրանց ուղարկած նամակս դեղ էր հասել, և նրանք անմիջապես լուրջ դարձել էին բարեկամների ու հայրենակիցների շրջանում: Արդյունքում երկու հազար կամավորներն ավագավագաւագաւագել էին միանալ դաշնակիցներին: Դա դեղի էր ունեցել 1917-ի ամռանը: Նրանք ափ էին իջել Կիպրոսում և հավաքագրվել ֆրանսիական դրոշի ներքո: Մեկ դարի անց արդեն կադարձ կռվում էին Պաղեսդինի ռազմաճակարտում: Մենք խոսում էինք ու խոսում...

«աջորդ օրը եղբայրներիս ենք մեկնեցինք «ալեա քրոջ»՝ Թեյզարին, բերելու համար: Խոսում էինք միայն մեր վերամիավորումից:

Մենք նրան թաղված գրանք Հալեպի ազգային գերեզմանոցում. մինչ օրս է այնպես է նրա աճյունը: Նա մեռել էր վշտից, մենությունից ու կրած զրկանքներից:

Եղբայրներս եեկեկում էին, իսկ ես կանգնած էի չոր աչքերով՝ որպես հանդիսաբես մի վշտի, որը զգում էի, սակայն չի կարող արփահայդել: Ինչ-որ բան իմ մեջ մեռել էր...

* * *

Թեյրութում մնացի գրեթե երկու ամիս, մինչև Հայկական ուժերի Փրանսիացի երամանադրար Ռումենն զրավեց Կիլիկիան: Փախսդականների ապահով վերադարձ կազմակերպելու համար հետդարձի ողջ ճանապարհի երկայնքով շոկարներ գրեղակայվեցին:

Ես նշանակում սրացա Ալեքսանդրեար քաղաքում, մինչդեռ եղբայրներս բանակի հիմնական ուժերի ենք արշավեցին Աղանա՝ Կիլիկիայի կարևոր քաղաքներից մեկը:

Թուրքերը սարսափահար փախչում էին Հայկական լեզենից, սակայն մեկուսացած լեռնային արահենդիներում դարան էին մինում ու հարձակվում փարբեր ուղղություններով շարժվող հայկական քարավանների վրա: Շուրով անհրաժեշտ դարձավ զավաճի ողջ փարածքում ռազմական հենակետներ հասրադել և ապահովել քարավանների անվրանգությունը:

Այս ճգնաժամային իրավիճակում իրավուն հոգու ուղեկցությամբ ինձ գործողեցին Փայասի շքան, որդեռ մեծ թվով թուրքեր էին հավաքվել ու մթության քողի դակ քազմաթիվ կողոպուտներ ու հարձակումներ էին գործում:

Պարբեկած թուրքերն իրենց կարադությունը թափում էին անպաշտպան քարավանների վրա, իսկ այդպիսիք շաբ էին: Ինձ ապշեցնում էր իմ հայրենակիցների հոգու կորովը, թե

նրանք ինչպես էին ջանում վերադառնալ իրենց սեփական պնդրը և ինչպես էին հավաքում խոսքացված անվտանգությանը: Նրանք զայխ էին՝ ցնցուրիավոր, վանշված մի բազմություն... ծանր բեռների վրակ կրացած վղամարդիկ, հիվանդ, հյուծված կանայք, սովալլուկ երեխաներ: Նրանց աչքերում վախ կար, և երբ նրանց առաջարկում էինք ուղեկցել, նրախսրագիւրությունից փորձում էին համբուրել մեր ճեռքերը:

Շարաթներ անց թուրքական ավազակախմբերի հարձակումները կ' ավելի հաճախակի դարձան, և ես սկսեցի մրցորել՝ վեսնես որդեղից են նրանք սրանում զենք ու զինամթերք: Ես կափարվածի մասին հայրնեցի Գյխավոր շփար և լիազոռություն սրացան նրանց գյուղերում սրուցումներ անցկացնելու: Սրուցումների արդյունքում, ի զարմանս ինձ, պարզեցի, որ զենք ու զինամթերքը նրանք սրանում են ֆրանսիացիներից:

Այդ մասին նամակով գրեղեկացրինք Ալեքսանդրեփում գրմանվող իմ վերադասներին: Որևէ գործողություն չձեռնարկվեց, և ես սկսեցի երկմբել իրավիճակի մասին:

Շուրջով հրաման սրացան գնդապետ Ռումեռից՝ քառասուն հոգանոց հեծելազորային ջոկատ կազմել և անհապաղ Աղանա մեկնել:

1919թ. մարտի 28-ին ճանապարեի մի մասը գնացքով անցնելուց հետո մենք ժամանեցինք նշանակված վայրը:

Կիլիկիան ազատություն էր շնչում: Զարդարների ու գյուղերի փողոցները լի էին մարդկանցով, և յուրաքանչյուր օր վրան էր: Օսմանյան կայսրությունը փլուզման եզրին էր: Զինադադարի սրորազբումից հետո Աղալիայի շրջանը շրջափակել էին իրալացիները, Զմյուսնիան՝ հույները, իսկ Կոսփանդնուպոլիսը փասփռեն դաշնակիցների ճեռքին էր:

Գարունն ու ամառն անցան առանց իրադարձությունների, սակայն աշնան կողմ մեր դաշնակիցների ու պաշտպանների՝ ֆրանսիացիների ու անգլիացիների վերաբերմունքն սկսեց փոխվել: Ես զգում էի, որ արդեն երկար ժամանակ է՝ ինչ-որ խարդավանք է խմորվում:

Անզիացիներն ազադում էին մնծ թվով թուրք ռազմագերիների, և նրանք ամեն օր Ալդենի երկաթուղով անցնում էին Կիլիկիայի դարաձքով:

Բրիդանական զորքերն անսպասելի լրեցին Այնթապը, Մարաշը, Քիլիսն ու Աղանան և առանց բավարար բացափռություն փալու հանձնեցին դրանք Հայկական լեզննին, որը նման առաքելության պատրաստ չէր: Անզիացի սպաներից մեկն ակնարկեց, թե Փրանսիացիներն ու թուրքերը եկել են գաղփնի համաձայնության, և դրա արդյունքում դաշնակիցները կթողնեն Կիլիկիան: Մեկ ամսվա ընթացքում բրիդանական բանակը փաստորեն դուրս բերվեց Կիլիկիայից:

Դաջորդ քայլն այս խաղում, որդեռ իմ ժողովուրդը մանրադրամի դեր էր կապարում, շար ավելի ողբերգական էր. Կիլիկիայի Փրանսիացի գավառապետը թողեց պաշտոնը և իր փոխարեն թուրք գավառապետ նշանակեց:

Հայերը դառնացած էին. նրանց գրվել էին անդրժելի թվացող խոսքումներ: Ես նոյնպես դառնացած էի, բայց ոչ զարմացած, քանզի ճանաչում էի դիվանագիրության նենզ բնույթը: Պարերազմը մարդկանց դարձնում է կապադած, երբեմն՝ ենթասական գիշափիչներ. դիվանագիրությունը շնագայլերի խաղ է: Ես գերադասում էի կովել:

Երբ տեղեկացած Փրանսիացի գավառապետի արարքի մասին, որոշեցի ուշի-ուշով ենթևել Գիլավոր շփաքի գործողություններին: Մի օր տեղեկացած, որ տեսել են, թե ինչպես զնդապետ Ռումենյի շփաքից թուրք մայոր է հեռանում: Ես երամայեցի հետևել նրան. թուրք զինվորականը մրավ քաղաքի արվարձանում գրնվող թուրքերի ճամբար:

Այդ զիշեր քաղաքացիական հազուսփով ուղևորվեցի թուրքերի ճամբար: Ես վստահ ներս մրա, ժպտացի և բարեկամական «ՀԱ-ԱԱՐԱԱՄ ԱԼԵՐՌՈՒՄ» ողջունը հղեցի ապշած պահակներին, ովքեր պարապահանեցին գրեթե մեքենայաբար: Ես ներկայացառապես Էմին բեյ՝ հրետանային կապիտան Աղրիանապոլսից: Նրանց համոզելու համար նույնիսկ ցույց

դրվեցի լուսանկարներս՝ թուրքական համազգեստով:

Ինձ ուղեկցեցին բարձրասրբին պաշտոնյաների մոլոր, ովքեր թեև ուրախ էին այցիս համար, սակայն մի փոքր զարմացած, որ հանդգնել եմ միայնակ հայրնվել այս կողմերում, որդեռ արյունախում արաբները կարող էին հարցերս լուծել: Այդ հարցի պարագախանը նախապես պարրասպել է. բացափրեցի, որ արձակուրդ են սփացել Հալեպի դիվիզիայից ու Կեսարիա մեկնելու ճանապարհին պարզապես կանգ առաջ այսպես: Պարմությանս հավաստիություն հաղորդելու համար ասացի նրանց, որ ծափվել եմ որպես հայ՝ վախենալով շարունակել ճանապարհս, քանի որ լուրեր են պարփակում, թե դասնիհնգիազարանոց հայկական հզոր զորքը մուրենում է Մերսինի կողմից:

Ասդիմանաբար նրանք ավելի գրուցաեր դարձան:

- Ձեր բոլոր զինվորները պարրասրվում են դուն գնալ, - հարցրի ես:

Նրանք ծիծառեցին ու վսրահեցրին, որ նման բան չկա. նրանք պարրասրվում էին միանալ Մուսթաֆա Քեմալի բանակին: Զեմալը ուժեղ մարդ է, նա՛ կրուժի Թուրքիայի վերքերն ու շուրջով հետ կվերցնի կորցրած բոլոր դարածքները:

- Մեզ համար ամեն բան բարենպաստ ելք սրացավ, կապիրան, երբ մեր թշնամիները դարձան մեր անփոխարինելի բարեկամները: Իրավիճակը հասկանալը դժվար չէ. նրանք բոլորը ցանկանում են վերահսկել Թուրքիան, սակայն միմյանց հետ համաձայնության չեն կարողանում գալ, ուստի մեզ ապահովում են զենքով ու զինամթերքով: Նրանք ավելի շուրջ կթողնեն Թուրքերին, քան դաշնակիցներից որևէ մեկին կհանձնեն. նրանք մեզ ավելի շատ են վսրահում, քան միմյանց:

- Ներկայումս մեր ամենամեծ գլխացավանքը հայերն են, - ասաց սպաներից մեկը, - այսպես՝ Կիլիկիայում, նրանք բավական եզր են ու լավ զինված: Սակայն Ֆրանսիացիները

մնաց վսկահեցրին, որ մի քանի ամսից Կիլիկիան վերաբին կիայինվի մեր ծեռջին:

Զգուշությունից դրդված՝ ես ծիծաղեցի նրանց հետ և միացա ծափահարություններին, որոնցով գնահապեցին ասվածը:

Քննարկվեցին վարքեր ծրագրեր, և ես սկզբեկացա, որ ֆրանսիացիները նրանց անվանգ ճանապարհ են խոսքացել դեպի Աղանա, ինչպես նաև նախորդ երեկո մթերք են ուղարկել՝ թուրքերի անմիջական կարիքները հոգալու համար:

Վերջապես նրանց բարեմաղթանքների ներքո ես երեկոյան շինձու ափառանքով լրեցի ճամբարը:

Այդ գիշեր վար քննեցի. որպես գինվորական՝ ես պեսք է գործողությունների ծրագիր մշակեի:

«Ձօքորդ առավորյան շրապեցի Հայկական ազգային միության խորհուրդ և նրանց հայդունեցի հայթայթած գեղեկությունները՝ միևնույն ժամանակ ներկայացնելով երեք կերպից բաղկացած գործողությունների մի ծրագիր.

1. Կիլիկիայում բարձրացնել հեղափոխության դրոշը.

2. ձերբակալել ֆրանսիացի բոլոր սպաներին և նրանց դուրս քշել գավառի դրամածից,

3. գինել ու ամրացնել հարձակման անմիջական վրանգի դրակ գրնվող քաղաքները, հափկապես սահմանամերձ քաղաքները և մեր դրամածի գավառը բոլոր հիմնական ուղիները:

Ես նշեցի, որ հավանաբար այդ պարագայում դաշնակիցները որոշ ուշադրության կարժանացնեն իրենց իսկ դրամածի խոսքումները:

Իմ առաջարկները չընդունվեցին: Ես գինվորական էի և սթափ գնահապում էի իրավիճակը, մինչդեռ Խորհուրդը կազմված էր հարուստ գործարարներից, ովքեր բացառապես լրգեցի էին քաղաքական ու ռազմական հարցերում և ավելի շատ հետաքրքրված էին իրենց անձնական հաջողություններով. քան այն փասփռվ, որ իրենց ժողովրդին դաշնակիցները դավաճանել են: Նրանք պնդում էին, թե պաշտպանված են

Փարիզի համաժողովի որոշումներով: Ես փորձեցի առարկել, որ մենք չենք կարող օգտագործել որոշումներն ու խոսքերը վասմփուշպների փոխարեն, սակայն չկարողացա համոզել նրանց, որ Կիլիկիային մահացու վրանգ է սպառնում:

Անցավ ևս երեք ամիս: Դիմա արդեն թուրքերը բացեիրաց շփում էին Ֆրանսիական իշխանությունների հետ:

Ֆրանսիական կառավարությունը իրաման արձակեց առ այն, որ բոլոր հայ զինվորները, ովքեր ցանկանում են պաշտոնաթող լինել զինվորական ծառայությունից, ազար են իրենց որոշման մեջ:

Ամերիկայից ժամանած կամավորների գրեթե կեսն այս պահին արդեն համոզվել էր, որ Ֆրանսիացիները դավաճանել են մեզ. իհասթափված ու նողկանքով լցված՝ նրանք վերադան Ամերիկա:

Գնդապետ Ռոմեոյին փոխարինեց գնդապետ Ֆլիս-Մարին:

Փռթորիկը մարդենում էր: Բոլոր կողմերից հայրենիցին թուրք փախստականներ, գրեղի ունեցան բախտումներ: Ընդհանուր մթնոլորդը լարված էր: Կիլիկիայի արևելյան ու հյուսիսարևելյան մասերում քեմալականները սկսեցին պաշարել սահմանամերձ քաղաքները: Նենց այդ պահին Մարաշից հետո կանչվեցին Ֆրանսիական ուժերը՝ բնակիչներին դարձնելով կրողապիհների դյուրին ավար: Մի շաբաթ անց թուրքերը մրան քաղաք ու կոփորեցին շուրջ գրանցություն հազար հայ: Սպանվեցին նաև վեց հազար սենեգալցի զինվորներ:

Քեմալականները սկսեցին հայրենի ավելի մեծ խմբերով ու Հաճի շրջանում ահաբեկում էին հայ բնակչությանը: Այդ մասում բնակվում էին ընդամենը հազար հայ ընդանիքներ, որոնք մի քանի ամիս քաջաքար պաշտպանվեցին՝ մշղապես սպասելով Ֆրանսիացիների օգնությանը, որն այդպես էլ գրել չհասավ:

Իրավիճակն օր օրի վարթարանում էր: Ֆրանսիացիները շարունակում էին եռակի խաղ խաղալ: Երբեմն բացեիրաց

սապրարում էին թուրքերին, հետո վտօքր-ինչ օգնում հայերին, երբեմն զերիշխում էին նրանց սեփական շահերը, և այդ ժամանակ սպառնում էին թե՛ թուրքերին, թե՛ հայերին և սրիպում կռվել միմյանց դեմ:

Անորոշության այս ոռջ շրջանում ես և իմ գումարվակը պաշտպանում էինք Աղանայի արվարձաններում գտնվող վտօքրիկ զյուղերը:

Ես ինձ անօգնական ու սպառված էի զգում: Վերջապես հոգնեցի այդ խաղերից և որոշեցի պաշտոնաթող լինել ֆրանսիական ծառայությունից: Դա բոլորովին դժվար չէր, քանի որ ես երբեմն որևէ պայմանագիր չէի սրորագրել և կարող էի հեռանալ, երբ ցանկանայի:

1920 թ. փետրվարին Հայկական ազգային միությունը խնդրեց հայ կամավորներին պաշտպանել Աղանան: Ես ընդունեցի արևմբյան և հարավային գծերի հրամանադրությունը: Ծառայությունս վենց շուրջ եինք շարաթ, սակայն համոզվեցի, որ ֆրանսիացիները շարունակում են իրենց խաղը և թույլ չեն դալիս, որ մենք գործենք մեր ուզածի պես: Ես հասկացա, որ չեմ կարողանա իրագործել ծրագրերս և հրաժարական դրվեցի:

ԳԼՈՒԽ 17

ԹՈՒՐՉ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

1920 թվականի ապրիլն էր: Գրեթե գտարիտուկես էր անցել զինադադարի պայմանագրի ստորագրման օրվանից, սակայն Թուրքիայի հարցում համաձայնություն չկար: Երկրում իշխաւ էր ավագակությունը, և Մուսթաֆա Քեմալի հենքնորդները խառնաշփոթ էին սպեղծում ու ահաբեկում ներքին շրջանների ընակչությանը:

Թուրքերն օրեցօր ավելի էին լիդիանում. սկսել էին հարձակվել ու սպանել ֆրանսիացի զինվորներին: Այդախով դավաճաններն իրենք դավաճանության զոհ դարձան: Երկրում մոլեզնում էր ապստամբությունը:

Նայկական կամավորական ծառայությունից հրաժարական դադուց մեկ շաբաթ հենքո ես ծիավորների ուղեկցությամբ կապաղի ու վճռական պանտում էի դեպի լեռնային շրջանները. նրանք բոլորը դիմուկահարներ էին և հիանալի հեծյալներ, բացի այդ, ազադ խոսում էին թուրքերեն:

Սա մի պարզ արկածախնդրություն էր. թեև ես միքումս հսփակ կազմած ծրագիր ունեի, որն ինձ հանգիստ չէր դալիս, սակայն սրբով զգում էի, որ այն իրականացնելու ոչ մի հույս չկա: Այդուհանդերձ շարունակում էի առաջ շարժվել, քանի որ ևերսից ինձ կրծում էր անհասկանալի ու առեղծվածային մի զգացում: Մդրածում էի Զեմիլեի, ծնողներիս, Թեյզարի, Փաշայի ու Մուհարեմի մասին ոչ որպես մեռածների, այլ՝ երազների աշխարհում ապրողների: Աշխարհում ճշմարդկություն չկա: Ես հուսահափ էի և եթե պետք է կործանվեի հուսահարությունից, դա ինձ չէր մփահողում: Մենք թուրք ավագակների հագուստ էինք հագել, որպեսզի ավելի հեշտ մփնեինք թուրքական զյուղերն ու փարածեինք մեր քախոզությունը:

Ես մղաղիք էի հնարավորինս մեծ փարածք ընդգրկել և օգտագործել բոլոր միջոցները թուրքերին շփոթության մեջ զցելու համար՝ փարածելով ահաբեկող պարմություններ հայերի ու ֆրանսիացիների եզրակացների հայերի մասին։ Քանի որ Ես նրանց հետ կռվել չեմ կարող, պեսք է պայքարել այնպես, որ սրիացին նրանց երկմորել Կիլիկիայի խոշոր քաղաքների վրա հարձակումներ կարարենուց առաջ։ Այս քաղաքները փասդորեն անպաշտպան էին։ Դրանց բնակչությունը կազմված էր հիմնականում կանանցից ու երեխաներից։

Փորձություններն ու արկածները, որոնց հանդիպում էի վեղից փեղ փոխադրվելիս, կարող են անձնական ոդիսականի երկար պարմություն դառնալ, սակայն դրանք պարմական արժեք չունեն։ Քանի որ Ես այնքան էլ լավ պարմիչ չեմ, դա հավանաբար կծանրաբեռներ առանց այն էլ երկար պարմություն։ Սակայն չեմ կարող ամբողջությամբ բաց թողնել պարմությանս այդ մասը, ուստի կպարմենմ երկու դրվագ, որոնք ինձ հանգիստ չեն փալիս և պեսք է թղթին հանձնվեն։

Մի քանի շաբաթ շաբանակ շրջում էինք լեռներում՝ շահելով զյուղացիների ու զինվորների վսրահությունը։ Մենք շաբի բան իմացանք նաև հուսալքված քենալական ուժերի և կողոպութով զբաղված թուրքական ավագակախմբերի մասին։

Ամենուրեք մեզ հանդիպում էին վայրագությունների հետքեր։ Մեզ պարահեցին ֆրանսիացի զինվորների անձանաչելորեն այլանդակված մարմիններ։ ճամբարի խարույկի մոտ նստած՝ մենք լսում էինք բարբարոսական սահմոկեցուցիչ պարմություններ։ Մենք քաղում էինք մեռելներին ու փորձում թեթևացնել մեռնողների վիճակը։ Նայենի ու խիզախ գումարդակը, որի հրամանադրան էր մայոր Միշելը, Մակեդոնիայի ռազմաճակապում քազմաթիվ մարդկում էր հաղթել։ Բազանթիի (Կիլիկիա) մոփակայքում թուրքերը նրանց վրա անսպասելի գրոհել էին և ջարդի ենթարկել գումարդակի զինվորների կեսից ավելիին։ Ուզ մնացածները կռվելով փախել

Եին թուրքական շրջափակումից և ապասպան գտել ամրոցում, որդեն էլ պարսպարվել էին եին շաբաթ: Մենք փորձում էինք ազարել նրանց, սակայն ամեն անզամ մեզ հետ էին մղում:

Մի գիշեր խիզախ մայոք Միշելի առաջնորդությամբ նրանք թռել էին ամրոցի դարպասներից, ջարդել թուրքական պաշտպանական կառույցները և իրենց հետ դրանելով երեք հարյուր վիրավոր՝ ուղևորվել արևմուղք՝ դեպի Տարածն: Ամեն օր մեր կողքով անցնում էին քրդական ու թուրքական ավազակախմբերն ու երգում հաղթանակի երգը:

Մինչ ես Բազանթիում էի, երկու եղբայրներս՝ սերժանդ Բարսեղը և կապրալ Արամը, կրվում էին ընդամենը երեսուն-երկու գինվորներից բաղկացած ուժերով: Բարսեղը՝ որպես Միսիսի կամքջի հրամանափար, երեք օր շարունակ արիաքար մարդնեցն երկուսազարանց քենալական ուժերի դեմ, փրկեց ավելի քան հազար հայ փախստականների ու նրանց ապահով հասցրեց Աղանա:

Մի օր Տարտուն քաղաքի մոփակայքում գրեղեկացանք, որ երկու հարյուրից ավելի ավազակներ պարրասպրվում են կողոպտել քաղաքը և սպանել քրիստոնյա բնակչներին: Մեր խումբը չափազանց փոքր էր նրանց դիմակայելու համար, և ես որոշեցի, խաբկանքի մարդավարություն կիրառելով, ապահովել շրջակա զյուղերի թուրք բնակչների աջակցությունը:

Մարդիկ անունով իմ գինվորներից մեկը դիրապելում էր մահմեդականների աղոթքի՝ նամազի բոլոր նրբություններին և կարող էր վարպետորեն վերարդադրել թուրք խոջաների խոսքն ու շարժուձեզ: Մենք նրա համար խոջայի հագուստ հայթայթեցինք և պարրասպեցինք ահաբեկող ու սպառնալիքով լի մի քարոզ, որը նա պիտի ներկայացներ:

Մեզանից երկու օր առաջ զյուղում հայքնեցին մեր մարդկանցից երկուսը և գգուշացրին զյուղի առաջնորդներին, որ սուրբ խոջա է զալիս: Շրջանի մզկիթը մաքրեցին ու ներտում հարդուկ խորհուրդ ունեցող սրբազան գորգ փռեցին:

Շուրջ հազար անգրագեղ զյուղացիներ եկան մեզ ողջունելու և պաշտամունքով համբուրելու Մարդիկի ձեռքը: Նա դանդաղ քայլում էր դեպի մզկիթը՝ գլուխը խոնարհած, դեմքի խորերդավոր արդահայդությամբ:

Վստահ եմ, որ Մարդիկը կյանքում երբեք այդպես չէր զվարճացել: Մարդիկ հավաքվել էին մզկիթի շաբրվանի մոտ՝ իրենց դեմքը, ձեռքերն ու ոտքերը լվանալու համար: Նեփո լուս հավաքվեցին թափառաշրջիկ խոջայի շուրջ, ով պեսք է լցներ նրանց հոգիները Մարգարեի ոգով: Վհճակը լարված էր, գրեթե պայթյունավորանգ, միաժամանակ և զավեշ փալի: Մարդիկը արիաբար, թագավորական քայլքով շարժվեց առաջ ու ամենայն լրջությամբ նսդեց իր համար պարբառված ծիսական գորգի վրա:

Ինձ զարմացրեց նրա ճայնի հսկակությունն ու մաքրությունը. ես շունչ քաշեցի, երբ նա սկսեց քարոզը Դուրանի առաջին բառերով՝ «Բիս Միլլահ-ի Ռահիման-ու Ռահիմ»: Նրա դեմքն այլայվեց, ու կարծես խորին սրբազան զգացմունքներով համակված՝ նա աչքերը վեր հասեց և սկսեց կարառի թափահարել ձեռքերը: Նույն, Էլ ավելի բարձր ճայնով նա հոչակեց իր առաքելությունը:

- Լսնք, դուք, օ՛հ Մուհամեդի նվիրյալներ և իմ սիրեցյալ եղբայրներ, - սկսեց նա, - լսնք մեր պաշտելի առաջնորդի սրբազան ցանկությունը: Խառնակ ու նողկալի ժամանակներ են, գիտուր են մեր գնները, մեր երկիրը: Մահվան սև ուրվականը վկանգում է մեր սրբազան կրոնը: Մեր կառավարության անպարկեշտ առաջնորդները՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, մեր երկու միլիոն երիտասարդների կյանքը կործանելուց հետո անցել է մոռացության գիրկը: Թեև աշխարհում խաղաղություն է փիրում, սակայն այսդեղ պատերազմը դեռ շարունակվում է: Չկա գեթ մի դուռ նույնիսկ ամենահեռավոր զյուղերում, որը կորցրած չլինի իր սիրելիներին: Եվ դա էլ դեռ ամենը չէ: Անհավաք հայերի հանդեպ կարգարած իրենց վայրագություններով մեր անառակ

առաջնորդները մեր դեմ են լարել ողջ աշխարհը: Լցված չէ՝ արդյոք մեր հողը հարյուրավոր օփարերկըրյա զինվորներով, ովքեր փորձում են հնագանդեցնել մեզ: Որքե՞ղ են եիմա մեր առաջնորդները՝ անհայտ ինչ-որ դեղ, ապահովության մեջ: Նրանք մեզ լրեցին ամենապարախանագոր պահին, իրենց հետ գանձարանը: Նրանք նսդեղ են օփար արևի գրակ՝ պերճության մեջ, ու հաճույքներ են վայելուն իրենց հարձերի հետ, մինչդեռ մենք այսդեղ գրախանագոր: Դիմա մեկ այլ ոճրագործ հայդրնվեց, մեկ այլ առաջնորդ՝ ոմն Մուսթաֆա Քենալ, որ հավաքել է արյունախում ավագակների մեկ այլ բանակ ու զնչացնում է մեր գյուղերը, բռնաբարում մեր կանանց, բռնի հավաքագրում ու սրիպում է անառակությամբ զբաղվել մեր կենդանի մնացած մի քանի պարանիներին ու վղամարդկանց:

Ինչպիսի ահավոր իրավիճակ... Սրա վերջն ի՞նչ է լինելու: Նրանք հրահրում են ձեզ, որ սպանեք քրիստոնյաներին՝ դրախսր ընկնելու համար, մինչդեռ իրականում նրանք հարս- փություն են դիզում: Նրանք ձեզ նողկալի սդեր են ասում: Մեր Մուհամեդը չափազանց Վշտացած է ու բարկացած, քանզի մահմեդականների ձեռքերը մինչև արմունկները ընկղմված են քրիստոնյաների արյան մեջ: Ելնենք, հավաքացյալներ, ու հրաժարվենք ծառայել բռնակալ Քենալին: Ոչնչացնենք նրա ավագակախմբերն ու արգելենք նրանց մկնել մեր գյուղերը: Միայն այդ ծնով կարժանանանք Ալլահի օրինությանը և կիրկենք մեր պարիվը, մեր երիտասարդներին և մեր դուերը:

Մարդիկի քարոզը եիհանալի էր: Նրա խոսքերը շաբերի վրա մեծ դրավորություն գործեցին, և գյուղացիները հավաք- վեցին նրա շուրջ՝ ակնածանքով երախտագիտություն հայդրն- լով նրա խորերդի ու հորդորի համար:

Այդ գյուղի առաջնորդը եռանդագին երախտագիտություն հայդրնեց նոր խոջային ու ցանկություն հայդրնեց, որ մնանք այնդեղ: Մենք, սակայն, շրապեցինք հայցել նրա ներողա- մկությունը՝ պնդելով, որ խոջային ուղեկցելու ենք այլ գյու-

դեր, որպես նա, քանի դեռ շաբ ուշ չէ, պետք է զգուշացնի նվիրյալներին Ալլահի վերահաս ցատումի մասին:

Մենք հեռացանք՝ խոսքանալով, որ քանի դեռ մոդակայքում ենք, կօգնենք նրանց հարձակման դեպքում և նրանցից նմանադիպ խոսքում սրացանք:

Գիշերը մնացինք Քոզղով պանդոկում, որի վերը հասպաթեց այն լուրերը, որ երկու հարյուր քեմալականներ շարժում են դեպի Տարսու: Նորազայում փեղեկացանք, որ նրանք պետք է հաջորդ օրն անցնեին այս հարվածով: Մենք սկսեցինք մրգածել մեր սեփական ճակարտագրի մասին:

Ողջ գիշեր մրգորում էինք՝ ինչպես խարել նրանց ու սրիակել փախչել: Սա խելահեղ մի ծեսնարկ էր գրանվեցհոգանոց խմբի համար: Մեր ծրագիրն ավելի հանդուզն էր, քան գրամարանական և կառուցվում էր Գորլեկ անունով նոր կիրճի շուրջ, որով քեմալականները պետք է անցնեին Տարսոն զնալու ճանապարհին:

Հաջորդ օրը վաղ առավորյան մենք արդեն ուժի վրա էինք ու սպասում էինք: Ժամը իննին մոտ լսվեցին ծիերի սմբակների ծանր դրկուունը ու ծիավորների գրնիկի երգը: Քիչ անց մենք նրանց ողջունում էինք եղբայրական եռանդով:

Ես ասացի, որ մենք Մուսթաֆա Քեմալի նվիրյալ հերկուորդներն ենք և վարձվել ենք որպես ուղեկցող ու պահապան ջռկադ՝ նրա հավաքարիմ զինվորների անվանագ անցումն այս ճանապարհով ապահովելու համար, քանի որ նախկինում քազմաթիվ քեմալականներ այսպես հարձակման են ենթարկվել ու կողոպսրվել չափազանց ակրիվ գործող դասալիքների ջռկադների կողմից: Ես զգուշացրի, որ չփորձեն շարունակել ճանապարհը մինչև ժամը 11⁰⁰-ը, քանզի ես մրադիր եմ ուսումնասիրել իրավիճակը՝ նրանց ճանապարհն ապահով դարձնելու համար:

Պանդոկը եյուրընկալ էր, իսկ նրանք՝ հիմար. իմ պարմությունը նրանց համոզիչ թվաց: Սակայն այն պահին, եթե ես պարրասպրում էի իմ մարդկանց հետ հեռանալու, նրանք

հավաքվեցին մեր շուրջը՝ կափաղի թափահարելով սրերը, և մի պահ ինձ թվաց, թե մեր հանդգնությունը պատճենուի է: Նրանք, սակայն, դրանով պարզապես ցուցադրում էին իրենց խիզախությունը և հայփնում իրենց ծրագրերը՝ եռշուրել Տարսունի բոլոր քրիստոնյա կանանց: Անասնական մոլուցքով փարված՝ նրանք պնդում էին, որ պեսքը է շփապել:

Նրանցից հեռանալուն պես մենք քշեցինք մեր ձիերը ու դիրքավորվեցինք քարքարուր ժայռի վրա, որը նայում էր Գուրլեկի կիրճին: Ես երկու մարդ ուղարկեցի նախորդ օրն այցելած մեր գյուղը և խնդրեցի հանուն Աղլահի շփապել մեզ օգնության: Կես ժամ անց մեզ միացան քուրքական գյուղի առաջնորդն ու նրա մարդիկ: Լեռնանցքի մուտքի ու ելքի մոտ վեղ գրադարձրին հրացանակիրները, իսկ լեռներում դարան մփան զինվորները:

Կեսօրին կիրճում հայփնվեցին քեմալականները: Ես սպասեցի, մինչև նրանցից վերջինը մրնի կիրճ, և ազդանշան դրվեցի: Կես ժամ անց կոհիվն ավարդված էր. կիրճը լցված էր մեռած ու մեռնող մարդկանցով:

Հարձակման մասին լուրն արագ փարածվեց, և երկու օր հետո քեմալականների ջոկապներ ուղարկվեցին՝ հսկելու կիրճը:

Այդ բախումից հետո մենք բարձրացանք սարերն ու մեկ շաբաթ թաքնվեցինք այնպես: Դեպու շարունակեցինք ճանապարհը՝ շահելով թուրքական այլ գյուղերի առաջնորդների վսփահությունը, վիժնցնելով թուրքերի ծրագրերը կովով կամ խարենությամբ: Մենք կովեցինք ու սպաննցինք, մինչև ուժաւապառ եղանք:

Ես ձիս առաջ էի քշում որպես անփարբեր մի մարդ՝ անհեռանկար դարձի համար անհույս այրվող ճրագ այս ունայնության մեջ. դա իմ կյանքն էր... Հանկարծ հասկացա, որ չունեմ առաքելություն և չունեմ երազներ...

Մեր հանդգնությունն ու վսփահությունը, թե մենք նվիրյալ թուրքեր ենք, փարածվել էր ողջ լեռնաշխարհով: Երբ գյուղի

առաջնորդները գրեղեկանում էին, որ մենք մռկակայքում ենք, իրավիրում էին մեզ ճաշի: Խսկ ինչո՞ւ ոչ: Ես համաձայնում էի. մի բան, որ երբեք չէի անի, եթե այդքան մոլորված չզգայի ինձ կյանքի ունայնության եղրձանութում: Նախվինում ես հանդուզն էի, եիմար, քանի որ մեզ հյուրասիրության իրավիրած զյուղ գրանդ գյուղերն իրարից ընդամենը մի քանի մղոն էին հեռու: Ին մարդկանց թվաց, թե մենք կարող ենք գրիացնել երկու զյուղերին էլ: Ես համաձայնեցի, սակայն պնդեցի, որ մենակ շարունակեմ ճանապարհը: Ես մահացու եոգնել էի և իմ մարդկանցից, և՛ իմ ձիուց: Երազում էի մենակ մնալ: Միայն մի ափրծանակ վերցրի, մի քանի ձեռքի նոնակ ու քայլեցի առաջ:

Ճաշը գրանդիրոց հետո եիանալի էր, թուրքական սուրճ՝ թանձր, հաճելի ու հանգստավետ (մինչ այդ պահը միջադեպի մասին իմ հիշողությունները պարզապես միաձուլված են այդ օրերի միապաղաղությանը): Հանկարծ զյուղի շները սկսեցին հաշել, ու նույն պահին դուռը կարաղի բախեցին: Մեկ վայրկյանում կյանքը նոր իմաստ սրացավ: Գյուղապետը սկրթնեց ու չէր շրապում բացել դուռը: Ես վերսպիին դարձա կապիկան կամ պարտիզանական առաջնորդ: Տանքիրոջը իրամայեցի մնալ վերևում, իսկ ինքս ցած իջա՝ քննելու իրավիճակը:

Ես դուռը բացեցի ու գինսա երկու զինված քեմալականների: Այ քեզ բան... սրա համար արժե՞ր ապրել: Ես շրիսկացրի դուռը նրանց երեսին, կողպեցի այն, հանեցի ափրծանակս ու սլացա վերև: Այն պահին, երբ հասա սենյակ, որպես ճաշում էինք, նրանք սկսեցին կրակել լուսամուգներին: Ես սողացի հափակի վրայով ու նռնակ նեփեցի: Մթության մեջ սպվերներ նշնարեցի. նրանք շրապում էին թաքնվել ծառերի ու ժայռերի հնդրւում:

Գյուղապետը, նրա կինն ու երեխանները խուճապահար էին, և ես ողբի ճայներ լսեցի, որոնք կարծես մրցակցում էին գիշերով Ֆերայի կիրճում ոռնացող վարագների հետ: Խուճա-

այս մարդները գյուղապետը բանի պետք չէր, իսկ նրա կնոջ ճիշերն անփանելի սուր էին, հավրկապես երբ ես ինձ վրա քաշեցի նրա քողերից մեկը՝ այն երկար քողերից մեկը, որ իշնում է մինչև ուրքերը, իեւդր բռնեցի երեխայի ծեռքը և սլացա դեայի հետինամուտքը։ Ես կասկածեցի, որ դա ինչ-որ խարդավանք է, ուստի զգուշացրի նրան, որ եթե որևէ մեկը փորձի ծպրուն հանել, երեխան կմնոնի։ Կկարգաբեկ՝ արոյոք սպառնալիքս, թե ոչ՝ չգիտեմ։ Դավաճանության աեր և փրկվելու բնազդը սրիպում են մարդկանց աներևակայելի բաներ անել։

Խարկանքը, սակայն, գործեց, ինչո՞ւ կամ ինչպե՞ս՝ ասել չեմ կարող։ Ես գրեթե հպվեցի քեմալականների առաջնորդին, և նա կոպտորեն հրամայեց, որ անմիջապես հեռանանք կրակագծից։ Գիրեմ, որ դա հավանաբար անհավանական է հնչում, սակայն պարզ գիրենում եմ աչքերիս առջև և զգում եմ այն զիշերվա կործանիչ հանդգնությունը, երբ քայլում էի գյուղի փների հենքնի փողոցով՝ աղջնակի ծեռքն ամուր բռնած։ Դավաճանաբար կես մղոն էինք անցել, երբ թաքնվեցի փներից մեկի հետևում, հանեցի քողս, փվեցի այն երեխայի ծեռքն ու կոպտորեն հրամայեցի նրան զնալ մոփակա գունը և դուրս չգալ այնպեղից, քանի որ ես վերադառնալու եմ մի խումբ արյունոուչիք մարդկանց հետ։ «Ազնիվ ժամանց» է երեխաններին վախեցնելը։

Ես վազեցի հարևան գյուղ, որպես գյուղական՝ ծիերի մոտ կազմ-պարբռաստ կանգնած։ Նրանց մրահոգել էին հեռվից լսվող հրացանի կրակոցները։ Ես շնչակրուր պարմեցի գյուղացիներին նոյն պարմությունը և աղաչեցի նրանց հանուն Ալլահի հավաքել բոլոր զինված մարդկանց ու հետևել մեզ, քանի որ նրանց հարևանները ենթարկվել են ավազակային հարձակման։ Մենք փութով հեծնեցինք մեր ծիերը ու պացանք։ Գյուղում շրջապատեցինք քեմալականներին։ Նրանք փրկվելու ոչ մի հնարավորություն չունեին։ Երդվում էին Ալլահի անունով, որ մահմեդականներ ենու օրինական բանակի զինվորներ, սակայն գյուղացիների օգնությամբ մենք նրանց

սպանեցինք միանգամայն սատնաարդորեն: Ներո հավաքեցինք նրանց ծիերը, զյուղացիներին հրամայեցինք մնալ փեղում ու շարժվեցինք դեպի ձախ՝ իբր հերապնդելու մի քանի ողջ մնացած քենալականների: Մենք նորից թաքնվեցինք սարերում: Ես մինչ օրս զգիվեմ՝ այն զյուղապետը իսկապե՞ս մրադիր էր մարդնել ինձ, թե ոչ:

Պատերազմը, ինչպես գենանում եք, հերոսական արարք է: Ունանք զոհվում են, մյուսները կենդանի են մնում, որպեսզի գրեն այդ մասին:

Ի վերջո իմ մեջ վառվող վերջին կրակը մարեց, ու ես հոգնեցի վրեժից: Մեր առաքելությունն անհույս էր, պարմությունը հաղթեց մեզ: Մեր ջանքերն ապարդյուն էին: Վերջապես ես սրոշեցի մի կողմ դնել սուրս ու հրացանս: Կիլիկիան հայերի երկիրը չէր, այլ մի բաթրիացող կաթսա, որդեռ իմ ժողովրդի արյան մեջ դավեր էին եկվում:

Որոշմանս մասին գրեղեկացրի խմբիս ու հարցրի՝ կցանկանան ինձ հետ գնալ Էվերեկ անունով փոքրիկ քաղաքը:

Երեք օրվա ճամփորդությունը մեզ բերեց լավ ծանոթ երկարավուն հովիդը, որը հսկում էին ճյունապատ գազաթներով Էրջիաս սարերը: Ես շարունակեցի ճանապարհը՝ հազեցներու համար անհուն կարուրը, որը չէի փորձում հասկանալ: Ես իմ սեփական կյանքում սոսկ հանդիսապես էի:

Մենք դանդաղ շարժվեցինք դեպի արևմուտք, ու երբ արևը գրեթե անհետացել էր սարերի հետևում, հայդնվեցինք քաղաքի մորակայքում աճող ծառերի սրբերի դակ: Ես անցա հորս պատկանող ազարակի մոդով, որը ժամանակին լի էր մրգագրու ծառերով ու բերքառապ դաշտերով: Դիմա այդ դեղ միայն ամայի դաշտեր էին, այրված ու կոդրված ծառեր, որոնց մեռած ճյուղերը հուսահապ ծգվում էին դեպի մշուշապատ երկինք:

Ես ծիուց իջա ու քայլեցի առաջ: Ինձ մոդեցավ մի ծեր մարդ: Նրա դեմքը ծանոթ թվաց, ու նա կարծես ճանաչեց ինձ: Վերջապես հիշեցի նրան. մեր քաղաքի ալրադացն էր

աշխափեցնում: Նա նյարդային շարժումներով գգուշացրեց, որ զյուղ չգնանք. հիմա այն շրջապատել են թուրքերն ու քրդերը, իսկ քաղաքի հյուսիսային մասում ճամբար էր դրել քննալականների մեծ բանակը:

Ինքս է չգիտեմ, թե ինչու չէի շրջապում հեռանալ, թեև զգացմունքային մարդ չեմ: Ես մի մարդ եի, ում մեջ ամեն զգացմունք մարել էր:

Մթության մեջ մենք հեռացանք ու շարժվեցինք դեպի սարալանջին զբնվող անտառը, որպես և գիշերեցինք: Շեյքը զգուշորեն ու դանդաղ վերադարձանք Աղանա: Մեր ուղևորության յուրաքանչյուր օրն ապացուցում էր, որ Կիլիկիայում հայկական հարցը վերջնականապես «լուծված» է: Աղանայում գեսանք, որ հայ բնակիչները փախչում են՝ փխուր, վախեցած, իհասթափված:

Ֆրանսիական իշխանությունների հետ ունեցած գրույցից միանգամայն պարզ դարձավ, որ իմ անձնական արկածները նրանց մեծ դժգոհություն ու անհանգստություն են պարճառում, և ինձ խորհուրդ փրկեց անհապաղ մեկնել Ամերիկա:

Ես նայեցի եղբայրներիս, ու մենք հասկացանք, որ ամեն ինչ վերջացած է:

Գիշերը նավով դուրս եկանք Աղանայից: Վերևում անամայն երկինքն էր, որպես մի գեղեցիկ ասպրդ էր շողում...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՐԳԵՍ ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ	8
ԳԼՈՒԽ 1 ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՄԴԱՄԱՏԻ ՕՐԵՐԻՆ.....	10
ԳԼՈՒԽ 2 ԴԱՐԵՄԱԿԱՆ ՈՍԿԵ ՕՐԵՐԸ	17
ԳԼՈՒԽ 3 ԴԱՐԴԱՇԵԼՄ ԾՈՎԱՄԱՐՏԵՐԸ.....	28
ԳԼՈՒԽ 4 ԴԱՐԴԱՇԵԼՄԻՑ ՍՊԱՆԴԱՌՈՅ	53
ԳԼՈՒԽ 5 ՍԵՎ ԱՄՊԵՐԸ ՖՐԱՌՈՒ ԵՆ ՃՈՂՈՒՄ ԵՆ . ՍԻՐՈ ճԱՌԱԳԱՑԹՆԵՐԸ	64
ԳԼՈՒԽ 6 ԳԱՌԴՈՒՄԻ ԹԵՐԱԿՊԵԶՈՒՄ ՈԱԶՄԱՅԱԿԱՏԸ	72
ԳԼՈՒԽ 7 ԴԱՐԵՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ	86
ԳԼՈՒԽ 8 ԾՆՈՂՆԵՐԻՆ ՏԽՈՒՐ ճԱԿԱՏԱԳԻՐԸ	96
ԳԼՈՒԽ 9 ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԵՎ ՈՈՒՄԻՆԻԱՅԻ .. ՈԱԶՄԱՅԱԿԱՏՆԵՐՈՒՄ	107
ԳԼՈՒԽ 10 ՄԱՍՊԱՍԵԼԻ ԴԱՌԴԻՊՈՒՄ ՈՒ ԳԱՂՏՆԻ .. ԴԱՎԱԶ	117
ԳԼՈՒԽ 11 ՄԻՋԱԳԵՏՁԻ ՈԱԶՄԱՅԱԿԱՏԸ	123
ԳԼՈՒԽ 12 ՄԱՍՊԱՏՈՒՄ ԴԱՌԴԻՊՈՒՄ ԵՄ ՔՐՈԶԱ	137
ԳԼՈՒԽ 13 ՊԱՂԵՍԻՆԻ ՈԱԶՄԱՅԱԿԱՏԸ	147
ԳԼՈՒԽ 14 ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՑՈՒԹՅԱՆ .. ԿԱԶՄՈՒՄ	161
ԳԼՈՒԽ 15 ԱՐՅՈՒՆԱԼԻ ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ	175

Գլուխ 16 ԵՄ ՇԱՏԻՊՈՒՄ ԵՄ ԵՂԲԱՑՐՆԵՐԻՄ ԵՎ ՄԻԱՌՈՒՄ ՖՐԱՌՄԻԱԿԱՆ ԲԱՏԱԿԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ	
ԼԵԳԵՌՆԻՆ 185	
Գլուխ 17 ԹՈՒՐՔ ՊԱՐՏԻԶԱՎՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՁՈՒՄ....	194

**Գիրական խմբագիր՝
Խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային շարվածք՝**

**Հայկ Դեմոյան
Սվետլանա Դանինյան
Արուսյակ Օհանյան**

**Տպագրություն՝ օֆսնթ:
Թուղթը՝ օֆսնթ:
Տպաքանակը՝ 700**

**ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԿՈԼԼԱԺ» ՏՊԱԳՐԱՏՄՆԸ
Երևան, Սարյան 4
Դեռ.՝ (374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collage@arminco.com
www.collage.am**